

1980



ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՓ
ՆՐՈՒՍԱՂԷՄԻ

ԾԴ ՏԼԻԻ

Գ-Դ

1980



ՄԻՈՆ

ԾԴ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ

1980	Մարտ — Ապրիլ	Թիւ 3 - 4
1980	March — April	No. 3 - 4

S I O N

VOL. 54

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press
Jerusalem



194-98

9153-840

Կ Ո Ն Դ Ա Կ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՇՆՈՐՀԻՒ
ԱՄԵՆԱՅՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ՍՈՒՐԲ ԵՒ ՏՆՅՈՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՅՆ
ՔՐԻՍՏՈՍԻ, ՅՈՐՄԷ ՀԱՍՅԷ ՇՆՈՐՀԻ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՍԻ-
ՐԵՅԵԱԼ ԵՂԲՕՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԻ ՄԵՐՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ, ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ
ԶԵԼԱՆՏԱՅԻ:

Գերաւնորհ եւ Սիրելի Մրբազան

Ուրախութեամբ է որ կը միացնենք Մեր սրագեղ շնորհաւորականը
Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Թեմական Խորհուրդներու եւ ժողովուրդի ե-
րախտագիտութեան, Ձեր ֆանանայական ձեռնադրութեան երեսնամեայ յոբել-
եանին առիթով: Երեսուն տարիներու Ձեր անխափան ծառայութիւնը, կո-
չումներու ամենէն ազնուագոյնին, Ձեզ արժանի ըրին այս տօնակատարու-
թեան: Ժողովուրդն է որ կը բերէ իր սէրն ու ազնաւանքը, անոր համբոյրը
ֆաղք է եւ անջնջելի, անոր բերած պսակը չի թառամիր:

Հակառակ այժմու Ձեր հասուն տարիքին եւ շնորհներուն, Ձեր անխոնջ
ու նուիրեալ գործունէութեան մեր եկեղեցական, կրթական եւ հանրային
ասպարէզներուն մէջ, որոնց մօտէն տեղեակ եմ, Դուք կը մնաք ինծի համար
այն ֆաղք եւ աշխոյժ պատանին, որ տարիներ առաջ ներս կը մտնէր երու-
սաղէմի ժառանգաւորաց Վարժարանէն, որուն Տեսուչն էի այդ օրերուն:
Այս պարագան մտածելու տարազ մը ըլլալէ աւելի, անչինջ պատկեր մըն է
իմ մէջս: Անհասանելի են մտքին համբաները: Քաղք է անցեալը, երբ մա-
նաւանդ ներկայի պսակը կ'ընդունի:

Տարիները անեցուցին եւ յարգարեցին հոգիիդ անդաստանը եւ առա-
ջացուցին միտքիդ տեսութիւնը, եւ մեր ժողովուրդի ծով կարիքներն ու սէրը
գօտեպնդեցին եւ զօրացուցին Ձեզի, անվարան առաջնորդելու պատրաստի համ-
բայէն, որ ծառայութիւնն էր մեր եկեղեցիին եւ ժողովուրդին: Ըրիք Ձեր
կեանքի անզոհելի զոհը, ծառայութեան կարմիր ուխտը: Տրամանուէ նայուած-
նիդ ծանրացաւ գերագոյն տեսիլովը, որ կեանքն ու երազը կազմեց մեր եկե-
ղեցիին ու Յեղին մեծ երախտաւորեալներուն: Ըրիք ինչ որ կարելի էր ընել,
ցաւակից եղաք ուրիշներուն, մօրն հոգիներու խորը վառելով յոյսին կայծը:

Քաղք է եկեղեցականին համար պահը՝ երբ կը շրջապատուի ան իր
հոգեւոր հարազատներով: Երբ հօտն ու հովիւր փոփոխի կու գան, պայմանա-

Ս. Էջմիածին, Ս. Չասիկ 1980

Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Արեւալիսկոպոս Տէրտէրեան
Պատրիարք Երուսաղէմի Հայոց
Երուսաղէմ

Սիրեցեալ Եղբայր մեր,

Այսօր, վերսին կանգնած Յիսուսի դասարկ գերեզմանին առջեւ, սուրբ առաքելներու հաւաստով ջերմացած սրտերով անգամ մը եւս կը խոստովանինք թէ նեմարտապէս «յարեաւ Քրիստոս ի մեռելոց», մահուամբ մահը յաղթեց եւ իր յարութեամբ կեանք պարգեւեց աշխարհի մարդոց, մեզի բոլորիս։

Յիսուսի յարութիւնը գերագոյն գրաւականն է կեանքի ուժերու յաղթանակին՝ ընդդէմ մահուան, բարոյ ու արդարութեան յաղթանակին՝ ընդդէմ մեղքին ու չարին, սիրոյ եւ խաղաղութեան յաղթանակին՝ ընդդէմ ասեւլաւառ ու խռովարար արարներու։

Սուրբ Չասիկ այս առաւօտուն, Յիսուսի յարութեան աւետիսով բողոքածայ մեր Մայր Եկեղեցին, եւ մեր հաւաստեալ զաւակներու կեանքն ու ձեռաց գործերը բող լուսաւորութիւն յարութեան ուրախութեան հառազայրումով։

Յարուցեալ Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի Իջման Սուրբ Սեղանէն եւ Սուրբ Գրական Արարատեան հայոց աշխարհէն, Չերդ Ամենապատուութեան եւ Սուրբ Աթոռիդ գինուորեալ Միաբանութեան, ձեր բոլոր Եկեղեցիներուն ու համայն ժողովուրդին՝ մեծ աւետիս՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Շնորհիւ հրաշալի յարութեան Քրիստոսի Եղիցին ընդ ձեզ այժմ եւ յաւիտեան։ Ամէն։

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ. Ա. ՉԳԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ւորելու փոխադարձ յարգանքի եւ սիրոյ առիթը, մեծարելու համար Եկեղեցւոյ գաղափարը եւ Քրիստոնէութեան խորհուրդը։

Այժմ Ձեր երեսուն տարիներու արդիւնաւոր դէպին վրայ կեցած՝ կրնանք ըսել սաղմոսերգութիւն հետ «Եղէ եւ ծառ պտղաւից ի Տան Աստուծոյ»։

Երկար ապրիք, սիրելի Սրբազան, աւելի առատօրէն արդիւնաւորելու Ձեր կարողութիւնները յօգուտ մեր Եկեղեցիին եւ ժողովուրդին։ Ընդունեցէ՛ք անգամ մը եւս անկեղծ սիրոյս հաւաստիքը եւ ջերմ համբոյրը Ձեր պայծառ հակասին։

Եղբայրական սիրով

Աղօթակից

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղէմի

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

ԱՆԹԻԼԻԱՍ — ԼԻԲԱՆԱՆ

Անթիլիաս, 17 Մարտ 1980

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Այսու գրով նախ պատրիարք կը զգանք յայտնելու Ձեզի որ յառաջիկայ Մայիսի 25ին, հանդերձեալ ենք կատարել Ս. Միլոնի օրհնութիւն Կաթողիկոսարանիս Մայր Տաճարին մէջ:

Պատրիարք կը զգանք միանգամայն հրաւիրելու Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը, որ հոգեւոր խնդութեան եւ հոգեկից օրհնութեան այդ օրը իր մասնակցութիւնը բերէր Ս. Միլոնի օրհնութեան արարողութեան, բարձրասիւնան հոգեւորականի մը ներկայութեամբ:

Վստահաբար Հայց. Եկեղեցւոյ անգլիկան միութիւնը խորհրդանշող Ս. Միլոնի օրհնութեան արարողութեան Ձեր Պատրիարքական Աթոռի մասնակցութիւնը հոգեւոր ցնծութեան եւ միասնականութեան ամրացման գեղեցիկ առիթ մը պիտի հանդիսանայ մեր հաւասացեալ ժողովրդեան:

Սպասելով Ձեր եղբայրութեան դրական պատասխանին եւ մնալով միշտ աղօթող Ձեր առողջութեան եւ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռի բեղմնաւէտ պայծառութեան համար:

Աղօթակիցֆ

ԳԱՐԵԴԻՆ Բ.

ԽՈՐԷՆ Ա.

Աթոռակից Կաթողիկոս

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

Ձերդ Ամենապատուութիւն եղիշէ Պատրիարք երուսաղէմի

Պատրիարքարան Հայոց

Հին Քաղաք, Երուսաղէմ, Իսրայէլ

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»

Ս. Յարութեան մեծ եւ կենսութեամբ աւետիսով կ'ողջունենք Ձերդ Ամենապատուութիւնը եւ Ձեր առաջնորդութեան վստահուած աստուածասէր հօտը:

Թող Յարուցեալ Փրկիչը Իր ամէնառատ շնորհն ու հովանին անպակաս ընէ Ձեզ եւ Ձեր ուխտակից եւ ուխտանուէր Միաբան Հայրերու վրայէն, եւ խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահէ Քրիստոսակոխ Սուրբ Երկիրն ու համագոյրը ամբողջ:

Շնորհաւորելով Ձերդ Ամենապատուութիւնը Զատկական համբոյրով, կը մնամ անխախտ սիրով ի Յարուցեալն Քրիստոս՝

Պ Ի Մ Է Ն

Պատրիարք Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ

Ս. Զատիկ, 1980, Մոսկուա

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Բ Ա Ր Ե Դ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Մարտ 17, 1980

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Սուրբ Զատկուան մօտալուտ տօնին առիթով համայն Քրիստոնեայ մարդկութիւնը իր հայեացքը կ'ողջէ դէպի Սուրբ Երկիր, ուրկէ յարութիւն առաւ Աստուածորդին եւ ուր մեր ժողովուրդը դարերով իր հաւատքը խնկեց աստուածակոխ վայրերու շուրջ:

Ներկայիս Ամենապատիւ Սրբազնութեանդ վիճակուած է խորհրդանշել զառնալ մեր պապերու սուրբ հաւատքին եւ աւանդապահը հանդիսանալ Սուրբ Տեղեաց մէջ գտնուող մեր աղօթատեղիներուն ու հաստատութեանց:

Ձեզի եւ Ձեր նուիրեալ Միաբանութեան կը մաղթենք ոյժ եւ կորով Ձեր աստուածահաճոյ առաքելութեան համար:

Սուրբ Յարութեան տօնին առիթով կը շնորհաւորենք Ձեզ եւ Երուսաղէմի ամբողջ Միաբանութիւնը եւ կը մնանք,

Խորին յարգանք՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Նախագահ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Փետրուար 20, 1980

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ, Իսրայէլ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Շնորհակալ ենք որ հեռագրով մը մեզ տեղեակ պահած էիք թէ ընթացիկ տարուան Յունուար 12ին ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ կը կայացնէիք մեր նախագահութեան 25ամակի՝ հանդիսութիւնը Ձեր բարձր հովանաւորութեամբ: Հանդիսութեան մանրամասնութեանց տեղեկացանք նաեւ մամուլէն, ուր ընդարձակ լրատրութիւն մը երեւցաւ:

Մեզի մասնաւոր գոհունակութիւն կը պատճառէ այս հանդիսութիւնը որ կը կայանայ պատմական Երուսաղէմի մէջ, դարաւոր աւանդութիւններով հարուստ շրջապատէ մը ներս:

Մեր անկեղծ բաղձանքն է որ այսպիսի առիթներ՝ գործող անձերու հանդէպ գնահատանքի արտայայտութիւն մը ըլլալէ աւելի՝ դառնան Բարեգործականի նախախնամական առաքելութիւնը ոգեկոչող եւ Միութեան հաւատաւոր զանգուածը գօտեպնդող ձեռնարկներ:

Կ'ուզենք այս առիթով մեր գնահատանքն ու գոհունակութիւնը յայտնել Ձեզի եւ հանդիսութեան բոլոր մասնակիցներուն, Ձեր ազնիւ մտածումներուն ու նախաձեռնութեան համար:

Ձեզի մաղթելով արեւշատութիւն եւ առողջութիւն, կը մնանք,

Խորին յարգանքով՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐԺ ԴՈՒՐԵԱՆ

(Մահուան ֆիսկամեակին առթիւ)

Յառաջիկայ Ապրիլի 27ին, Կիրակի օր, կը լրանայ մահուան յիսնամեակը Ս. Աթոռոյս երախտաշատ Պատրիարքներէն և ներկայ դարուս առաջին երեք տասնամեակներուն արտերկրի հայ հոգևորականութեան ամենէն փայլուն դէմքերէն՝ Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեանի։ Անոր՝ որ մեր նուիրապետական Աթոռներէն երկուքին զահակալելէ բացի, եղաւ թեկնածու Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան և, տիրող օրէնքին համաձայն, Ռուսիոյ Զարին քաղաքական հաշիւներով ի նպաստ Դէորդ Արքեպս. Սուրենեանի տրուած քուէին հետևանքով է որ չկրցաւ արժանաւորապէս բազմիլ Ս. Լուսաւորչի զահին վրայ։

Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան քաղաքական վերիվայրումներու պատճառաւ աւելի քան տասնամեակէ մը ի վեր թափուր մնացած Ս. Յակոբեանց վառապանձ զահը կը բարձրանար այնպիսի ատեն մը՝ ուր հայութիւնը մասնաւորաբար և զրեթէ ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը ընդհանրապէս, Առաջին Աշխարհամարտի քառսէն ու արհաւիրքէն ետք նոր շունչ առած՝ իր կոտորակեալ ոյժերը հաւաքելու և ինքզինք կազմակերպելով՝ լաւատես ու լայնարձակ թափով մը նոր կեանքին բացուելու ճիգեր սկսած էր դրսևորել ամէնուրեք։ Հին ու դարաւոր մտայնութիւններ փուլ եկած էին աշխարհաստան պատերազմէն և նոր զաղափարաբանութիւններ, շոնդալից կարգախօսներով, տառապող մեր համագոյքին լուսաւոր ապագայ մը հրաշակերտելու յաւակնութեամբ զանգուածներ կը հրապուրէին ու կը լծէին իրենց կառքին։

Շատ բան փոխուած էր նաև Ս. Երկրին մէջ, որ, թօթափած անարդ լուծը լման չորս դարեր տևող Օսմանեան տիրապետութեան, Միջնադարէն ի վեր առաջին անգամ ըլլալով կը մտնէր դրօշին ու հովանիին ներքեւ քրիստոնեայ մեծագոր տէրութեան մը։

Աթոռ բարձրանալէ ետք, Դուրեան Սրբազան իր ուշադրութեան առաջին առարկան դարձուց ժառանգաւորաց Վարժարանը, որ նոր էր վերաբացուած Մեսրոպ Եպս. Նշանեանի ջանքերով և սակաւաթիւ աշակերտներով։ Դուրեանի առաջ նպատակներէն մէկն էր արդէն ի գլուխ հանել «սուրբ վրէժխնդրութեան» դորձը, այսինքն Մեծ Եղեռնէն հնձուած Արմաշական զարգացած կղերականներու փաղանջը փոխարինել ժամանակի պահանջներուն և մեր ժողովուրդին համար ստեղծուած նոր պայմաններուն պարտադրած նոր ու ծանր կարիքներուն զոհացումը տալ կրցող ուսեալ, պարտաճանաչ ու անձնդիր հոգևորականներով։

Անկէ ետք, շինարար ու գրասէր Պատրիարքը իր նայուածքը դարձուց Տպարանին, որուն մեքենաները վերսկսան ճոնչել 1925ի Մայիսին, տասնամ-

եակի մը դադարէ յետոյ: Նոր ու արժէքաւոր հրատարակութիւններ կու գան ճոխացնել հայ զրականութեան ու բանասիրութեան անդաստանները: Յիշատակութեան արժանի է մասնաւորաբար, 1927ին լոյս տեսած, Դուրեանի հետ Արմաշի շունչն ու ոգին հանդիսացող միւս մեծ հոգևորականին՝ Յրանաշնորհ Օրմանեան Սրբազանի «Ազգապատմութիւն» կոթողական գործի վերջին հատորը:

Նմանապէս 1927ին կը վերսկսի հրատարակութիւնը կէս դարէ ի վեր լռած Ս. Աթոռոյս պաշտօնաթերթ «Սիոն» ամսագրին: Դուրեան Սրբազան թերթին խմբագրապետութիւնը կը յանձնէ օրուան բազմամուտ հոգևորականներէն Բարգէն Եպս. Կիւլէսէրեանի (հետագային Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) ու մինչև իր մահը կը ճոխացնէ թերթին բովանդակութիւնը կրօնական յօդուածներով, բանասիրական կնճռոտ հարցերու պարզաբանումը ընող լուրջ ուսումնասիրութիւններով և միջազգային բանաստեղծական զոհարներէն ճարտարութեամբ կատարած իր թարգմանութիւններով:

Նոյն տարւոյ Յուլիսին, երկրաշարժէ մը կը կքի անշուք ու խաթուլ շէնքը ազգային վարժարանին: Սրբազանին նախաձեռնութեամբ անմիջապէս կը ձեռնարկուի արդիական բոլոր յարմարութիւններով օժտուած վարժարանի ներկայ շէնքի կառուցման, որուն ծախքը կը հոգայ Պոլսեցի ազնիւ բարերարուն՝ Աղանի Ճէվահիրճեան, Գրիգոր և Սիմէոն Մարգարեան եղբարց հետ միատեղ: Վարժարանը իր դռները կը բանայ զաղթականութեան արիւնքներէն հոծացած Սաղիմայ զաղութի երկսեռ մանուկներուն ու պատանիներուն առջև: Դուրեան Պատրիարք 1929 Հոկտեմբերի սկիզբը պաշտօնական բացումը կը կատարէ Սրբոց Թարգմանչաց Նախակրթարանին և Մանկապարտէզին:

1928ին Դուրեան Սրբազան բախտը կ'ունենայ վերաբացուած Ընծայարանի անդրանիկ հունձքը հանդիսացող երկու բարեշնորհ Սարկաւազներու զուլսները պսակազարդելու կուսակրօնութեան խորհրդանիշը եղող վեղարով:

1929ին կը ձեռնարկուի շինութեանը Կիւլպէնկեան Մատենադարանին, ուր պիտի ամփոփուէին վանուցս զոհնազան բաժիններուն մէջ ընրուած բազմահատոր գիրքերն ու թերթերու հաւաքածոները: Հանգուցեալ մեծանուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի բարերարութեամբ կառուցուած հայ զաղութին պատիւ միայն բերող այս զրապալատի հիմնարկէքը կը կատարէ Դուրեան Պատրիարք դարձեալ 1929ի Հոկտեմբերին: Դժբախտաբար, վերահաս մահը առիթ չի տար իրեն տեսնելու շէնքի աւարտումը և կատարելու պաշտօնական բացումը անոր: (Այդ վիճակուեցաւ իր աշակերտին և արժանաւոր յաջորդին՝ Թորգոմ Պատրիարք Դուշակեանի, որ փորձ զրազէտի իր տաղանդով ստուար հատորի մը մէջ տուած է մենագրութիւնը իր մեծ ուսուցչին):

Երբ կը խօսինք Դուրեան Սրբազանի մասին, անհնար է ոչ միայն չանդրադառնալ՝ այլև չծանրանալ մեծանուն Պատրիարքի քահանայական օժման Յիսնամեակին առթիւ հանդիսադրուած Յոբելեանին, որ համազգային տարողութիւն ստացաւ և անհրաժեշտ փաստը բերաւ այն անվերապահ համակրանքին և յարգալից գնահատանքին՝ զոր ամբողջ ազգը — առանց դաւանական կամ կուսակցական խտրութեան — կը տածէր մեծ հովուապետին նկատմամբ: Այդ առթիւ հրատարակուեցաւ «Մեակն ու Վարձը» խիստ յատկանշական խորագիրը

կրող պատկանելի հատուրը, ուր մէկտեղուեցան աշխարհի բոլոր ծայրերէն — ու զլիաւորաբար իր բազմասրիւր աշակերտներէն — Սրբազան Յորելեանին ձօնուած յօդուածները, Սրբազանի կեանքի զանազան հանգրուաններէն վերցրեալ յիշատակելի լուսանկարներով միասին: Սրբազանին Յորելեանը նշուեցաւ նաև այլ զաւուրթներու ու մասնաւորաբար իր ծննդավայր Կ. Պոլսոյ մէջ:



Դուրեան Պատրիարքի անձին վրայ կը փայլէին բազմաթիւ արժանիքներ ու առաքինութիւններ՝ որոնցմէ մէկը միայն բաւ պիտի դարձնամանութեան յանձնելու անհատի մը տնունն ու յիշատակը: Նրբալուեցող բանաստեղծ, հմուտ բանասէր, լեզուագէտ, անյաղ ուսանող (65 էն վեր իր Գերմաներէնը ճոխացնելու կը հետամտէր) և ընթերցող, թարգմանիչ, վաստակաշատ և հոգեբան ուսուցիչ, շնորհալի բեմբասաց, խոհուն վարչագէտ և այս բոլորը պսակող կարեկից սրտի տէր ու իր կոչումի վեհութեան լիովին զիտակից ամբասիր ու յորովայնէ ընտրեալ հոգևորական:

Դուրեան Սրբազանի Ս. Աթոռոյս գահակալութեան ութ ու կէս տարինէն (զահ բարձրացած է 7 Նոյմ. 1921ին) զործունէութեան մասին ըրած մեր արագ նշմարներէն ետք, պիտի ուզէինք համառօտիւ անդրադառնալ վերոյիշեալ բարեմասնութիւններէն իւրաքանչիւրին:

Զանց կ'ընենք անդրադարձումը Դուրեանի քերթողական անհուն վաստակին, քանի որ զայն լաւագոյնս կատարած է Կ. Պասմաճեան, քանի մը էջ անդին երևցող վերլուծական իր ակնարկով:

Իբրև բանասէր և քննադատ, Դուրեան Սրբազան ունեցաւ իր ուրոյն տեղն ու կշիռը, և իր հեղինակաւոր խօսքը՝ իր ժամանակին արծարծուած հայ բանասիրութեան և լեզուագիտութեան վիճելի հարցերու մասին: Իր Այբուբէնի Հայերէնի Բանասիրութեանը ուշազրաւ և իր տեսակին մէջ գրեթէ բացառիկ զործ մըն է: Իսկ Ուսումնասիրութիւնք Եւ Քննադասութիւնք, իր զործերուն կարևոր մէկ մասին նման յետ-մահու հրատարակութիւն (լոյս տեսած իբրև Դուրեան Մատենաւար՝ իր Յորելեանին առթիւ կատարուած նուիրահաւաքութեան իբր արդիւնք), իր ստուար կազմին մէջ կ'ամփոփէ այլազան առիթներով պարբերական մամուլի մէջ լոյս տեսած հմտակից իր յօդուածները:

Իբրև զրաբարագէտ՝ անմրցելի էր Դուրեան Սրբազան: Ապացոյց՝ իբր դասագիրք հրատարակած իր Բառագիտութիւնն ու Ընթացի Ի Գրոց Բարբառի երեք հատորները՝ որոնք արժանացած են բազմաթիւ տպագրութիւններու և մինչև օրս զործածական են ազգային բարձրագոյն վարժարաններէ ներս:

Իբրև թարգմանիչ ևս Դուրեան Սրբազան իր ետին թողած է երախտաշատ վաստակ մը: Բաւ պիտի ըլլար հոս յիշել Էմիլ Պուարաքի Համառօտ Պատմութիւն Փիլիսոփայութեանն ու Յրաշուքի համառաւոր բանաստեղծներու առաւելաբար կրօնական խորքի վրայ բանուած կտորներու հայերէնի վերածումը: Նաև Շնորհալիի տաղերէն ոմանց աշխարհաբարի ոչ նուազ գեղեցիկ ու ներդաշնակ հանդերձանքով տարագումը:

Իբրև քարոզիչ՝ իր ունկնդիրները հմայել է աւելի զաղտնիքը ունէր Աւետարանին «բան»ը զանգուածներու սրտին հասցնելու: Ս. Գրական ճշմարտութիւններու բացայայտման ու պարզաբանման իր մեթոտէն զատ ատոր իրենց նպաստը կը բերէր նաև խոր համոզումէ բխող իր կիրթ ու կշռաւոր արտայայտութեան կերպը, ի մի բան՝ պարզ ու անսեթեթ խօսքը:

Ու վերջապէս իբրև անզուգական ուսուցիչ, Դուրեան Պատրիարք սերունդներ դաստիարակած է, դասարանական ամպլոններու վրայէն մտքի ու հոգիի սնունդ շամբելով «մերկ ուղեղ»ներու, հոգեբան դաստիարակի անփոխարինելի իր նպաստովը դասաժամերը վերածելով իմացական վայելքի պահերու:

Դուրեան Սրբազանի անստղիւտ արժանիքները զինք արժանացուցած են նաև օտար անուանի անձնաւորութեանց բարձր համարումին ու ակնածանքին: Ատոր լաւագոյն փաստը երևան եկաւ իր Յորելեանին առթիւ, երբ Բրիտանական Հոգատար Կառավարութիւնը Կայսրութեան Ասպետի շքանշանով և *Sir* տիտղոսով պատուեց զինքը, իսկ Ն. Վեհ. Ժօրճ Ե. Թագաւորը իր և Թագուհին մեծագիր և ռակեղծեալ շրջանակով նկարները նուիրեց Յորելեար Պատրիարքին, ինքնագիր ստորագրութիւններով և զարդարուած կայսերական թագերով:

* * *

Դուրեան Սրբազան վերջին տարիներուն կը տառապէր որձիտի հիւանդութենէ և միզարգելութենէ: 1927ի սկիզբը ծանրապէս կը հիւանդանար և նոյն տարուոյ Ապրիլին վիրաբուժական գործողութիւն մը կը յաջողի փրկել իր թանկագին կեանքը: Երեք տարիներ ետք կը կրկնուի նոյն հիւանդութիւնը և Յորելեանէն ճիշդ կէս տարի ետք, 27 Ապրիլ 1930, Նոր Կիրակիի առաւօտուն, կը մտնէ իր յաւիտեանական հանգիստը, երեք շաբաթներ տևող Ֆիզիքական ահաւոր տառապանքներէ ետք, 70 տարիքը նոր անցած, անօրինակ սուգով համակելով սրտերը Ս. Յակոբեանց Միաբանութեան, Սաղիմահայ զապութին, ու նաև զաղթաշխարհի համայն հայութեան և զինք ճանչնալու բախտը ունեցող ու իր սրտակից բարեկամութիւնը վայելած բազմաթիւ օտարներու: Կ'արժէ յիշել թէ իր այդ տաղնապալի վիճակին մէջ իսկ Սրբազանը իր մասնակցութիւնը բերած էր Աւագ Եօթնեակի երկարատև ու յոգնեցուցիչ արարողութեանց, կատարած Ունալուայի արարողութիւնը և ընթերցումը՝ կէս ժամ տևող Խաւարման զիշերուան առաջին Աւետարանական հատուածին: Իր զառանցանքներուն մէջ իսկ յաճախ յիշած էր Եզնիկը, որուն բնագրային ուսումնասիրութեամբը զբաղած էր իր վերջին օրերուն և որ մնացած էր կիսաւարտ:

Յորելեանները, մանաւանդ երբ կ'ոգեկոչեն յիշատակը մեզմէ մարմնով առ յաւէտ բաժնուած անձնաւորութիւններու, անոնց երախտաշատ վաստակին հանդէպ եղած զնահատական արտայայտութիւններու մատուցման առիթներ ըլլալէ բացի, պէտք է որ ըլլան խթան մը անոնց օրինակովը ընթանալու, ուր չպակսէին մեզի ջանքն ու իմաստութիւնը անոնց բարեմասնութիւնները մե՛րը ևս ընելու:

Ի՛նչ-որ յարգանք Դուրեանի արևոտ ու տնօն յիշատակին:

Գ. Ժ.

ԿՐՈՆԱԿԱՆ

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք

Ժողովուրդներու և ազգերու պատմութեան մէջ թուականներ կան, որոնք միմիայն յիշատակութեան արժանի են. իսկ կան թուականներ, դէպքեր ու դէմքեր, որոնք կը կերտեն, կը հիմնեն ու կը հիմնաւորեն տուեալ ժողովուրդին ու ազգին պատմութիւնը:

Վարդանանց պատերազմն ու 451 թուականը այն մեծ դէպքերէն ու թուականներէն են, որոնց վրայ խառնաձուլած ու հիմնաւորուած է Հայ ժողովուրդի ոչ միայն Ե. դարու, այլև յաջորդող ու մինչև օրս հասնող պատմութիւնը: Ամէն դարու, առաւել կամ նուազ չափով, յետադարձ ակնարկ մը նետուած է դէպի Վարդանանց պատերազմը, անկէ օրինակ ու դաս, ոգի ու ներշնչանք առնելու:

Վարդանանց պատերազմը քրիստոնէական կրօնի պաշտպանութեան ի խնդիր մղուող առաջին պատերազմը հանդիսացաւ, ու այդ ըլլալով հանգերձ, է նաև ու աւելին՝ հայ ժողովուրդի լինելութեան փորձաքարն ու գոյատևման անկիւնաքարը:

Դ. դարը հայուն բերաւ քրիստոնէութիւն. կրօն մը՝ որ լուսաւորեց ու գիտակցական մակարդակի բարձրացուց մեզ, անով իսկ դառնալու հայկական կրօն մը: Քրիստոնէութիւնը հայուն տուաւ սէր և հաւատք հանդէպ կրօնի ու մարդկութեան, առողջ գիտակցութիւն՝ հանդէպ մեր ժողովուրդի առաքինութիւններուն ու բարեմասնութիւններուն:

Ե. դարու սկիզբներուն ծնունդ առաւ Սահակ-Մեսրոպեան գրական շարժումը. իրականութեան մէջ այդ է որ եղաւ քրիստոնէութիւնը հայացնող ու ազգային գիտակցութիւն արթնցնող շարժումը, որով զրահուած՝ կարող եղանք մղել Աւարայրի

ճակատամարտը ու շահիլ գոյատևելու իրաւունքը, որպէս կրօնական ու ազգային ոգիով տոգորուած ժողովուրդ մը: Քրիստոնէութիւնն էր որ ծնաւ Սահակ-Մեսրոպները:

Հայը ազգ կրնանք կոչել միմիայն այն օրէն երբ ունեցաւ իր այրուէնը, նոյնինքն իր հոգեկան արտայայտութիւնը՝ գրելու ու կարդալու իր պատմութիւնը իր իսկ ձեռով ու զգացումով: Քրիստոնէութիւնը, Հայ Եկեղեցւոյ միջոցաւ, եղաւ ստեղծիչը հայ գիրին ու դպրութեան, արթուն պահպանը հայ տաւանդութեան, ամուր կռուանը հայ լեզուի հաստատուն հիմքերուն ու վերջապէս անդու հաւաքին ու անքուն պահակը այն ամէն տարրերուն՝ որոնք ազգ մը կամ ժողովուրդ մը կերտելու կը ծառայեն:

Վարդանանց յիշատակի տարեկան ոգեկոչումը աւելի եղած է մեզի համար քան պարզ սրբոց տօնակատարութիւն մը:

Մեր պատմութեան էջերը լեցուն են պատերազմներով ու պայքարներով: Պայքարած ենք Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի, Արաբին ու Թուրքին դէմ, պետութիւններ՝ որոնք փորձեցին իրենց գերիշխանութիւնը տարածել փոքր ժողովուրդներու վրայ: Բայց վրիպեցան իրենց նպատակէն, որովհետեւ տեսիլքի ժողովուրդ էր Հայը, պատրաստ՝ իր արդար իրաւունքները պաշտպանելու և վսեմ գաղափարի մը յաղթանակին համար մարտիրոսութեան կարմիր պսակը ընդունելու: Վարդանանց պատերազմը կը տարբերի վերոյիշեալ պատերազմներէն. կը մնայ եզակի անով՝ որ գիտակցուած մահով մեռնելու պայքար հանդիսացաւ, և այդ գաղափարին համար մարտնչողներ արժանացան հերոսացման ու սրբացման: Անշուշտ մահը չէր որ զիրենք արժանի ըրաւ հերոսացման ու սրբացման, այլ այն գեղեցիկ ու վսեմ գաղափարը որուն համար մեռան: Վարդանանց պատերազմը մէկն է այն պատերազմներէն, ուր յաղթող կողմը կը կորսնցնէ:

Վարդանանց պատերազմով ու անոր յաջորդող վահանեան պայքարով Յազ-

կերտն ու Տիգրոսը փոխեցին իրենց նենգ ու աշխարհակուլ քաղաքականութիւնը Հայաստան աշխարհի նկատմամբ, ու այս ազատութեան պայքարի ջանակիրներն ու ռազմիրանները հանդիսացան Մամիկոնեան տոհմի արժանաւոր զաւակները, որոնք աւելի քան հինգ դարեր եղան տեսիլքի ու գաղափարի առաջնորդներ և հիւսեցին Հայ Եկեղեցւոյ սիրոյն մարտիրոսացողներու կարմիր շղթային օղակները:

Վարդանանց պատերազմի ատեն, օր-ուան կղերական դասը հանդիսատեսը չեղաւ միայն կրօնի ու հայրենիքի համար մղուող պայքարին: Հայ հոգեւորականը, հայու հոգիին խտացած գաղափարի մարմնացումն ու հաւատքի ներկայացուցիչը, այս երկու առաքինութիւնները իր մէջ միախառնած ու միաձուլած, ներկայացուց հայ ժողովուրդի փառքն ու խղճմտանքի ձայնը: Վարդանանց պատերազմի մէջ Ղեռնդեան քներկայացուցին պայքարի ոգին ու սլաքը. և պարտապահեց չէր որ սմբողջ Հայաստան աշխարհն ու հայը շարժեցան Ղեռնդ երէցի ու իր հետեւորդներու կամքին համաձայն: Այս ամէնը անոր համար որ հայ հոգեւորականը սգին ու ձայնը եղաւ տարուող պայքարին, գաղափարն ու հրայրքը՝ մարտիկին և խիղճն ու արտայայտիչը՝ ժողովուրդի անբացասելի զգացումին: Վարդանանց պատերազմին, մարտիկն ու կղերը, այսինքն հայրենիքն ու կրօնը միասին գացին Աւարայր, մարտիրոսութեան լուսապսակը՝ այսինքն տպրելու իրաւունքը իրարմէ խլելու, արիւնով գնելու, հաստատելու ու դրոշմելու համար: Պարզ հասկացողութեամբ կռիւ մը, պայքար մը չէր Վարդանանց ճակատամարտը, այլ դիւցազներգութիւն մը ու հոգեւոր առաքինութեան մեծագոյն սխրագործութիւնը: Աւարայրը, կրօնական ու ազգային հասկացողութեամբ, հոգեկանին յաղթանակը հանդիսացաւ՝ մարմնականին վրայ տարուած, ուր հայրենիքի և կրօնի համար պայքարողներ հանդիսացան մէյմէկ սուրբեր:

Ահա անխղիւ կապը Եկեղեցիին ու հայրենիքին միջև, կղերին ու մարտիկին

միջև, Վարդանի ու Ղեռնդի միջև: Անքակտելի կապը, որով Վարդան և ուխտագոհ նախարարներ զօղուեցան Հայ Եկեղեցիին, միայն քրիստոնէական անարատ հաւատքի արտայայտիչը չէր, այլ և աղբիւրը հայ ժողովուրդի հոգեկան առաքինութեան: Ու հայ կղերը, ժողովուրդի իսկական զաւակը, դրօշակիրը եղաւ այդ հոգեկան առաքինութեան:

Ամէն դար, դժբախտաբար, ծնած է վասակներ, առաւել կամ նուազ հափով Վարդաններ որքան նուիրական ու սուրբ են, այնքան և աւելի դատապարտելի ու պախարակելի են վասակներ, իրենց ընթացքով, կեցուածքով ու գաղափարով: Վասակ Սիւնիի դաւաճանական արարքը կը մնայ ու պիտի մնայ դատապարտելի ու սե բիծ մը, դրոշմուած ու քանդակուած հայոց պատմութեան տախտակին վրայ: Ի զուր տեղ երբեմն մարդիկ ու նոյնիսկ պատմաբաններ փորձած են ու կը փորձեն արդարացնել վասակի ազգադաւարարքը, տալով անոր քաղաքական ու դիւանագիտական գունաւորում ու պիտակ:

Վարդաններ ապրեցան ու կ'ապրին, որովհետեւ մեռնիլ գիտցան, իսկ վասակներ մեռան, որովհետեւ տպրել նախընտրեցին:

Վարդանանց ոգին, այսինքն անսխիւքն ու գաղափարը և հոգեկան առաքինութիւնները աւելի քան անհրաժեշտութիւն ու հրամայական պահանջք են այսօր գաղթաշխարհի հայորդիներու համար: Պահել ու պահպանել Հայ Եկեղեցին, գիրն ու գրականութիւնը, լեզուն ու պատմութիւնը, շարունակութիւնը պիտի հանդիսանայ 451ին և Վարդանանց պատերազմին: Բոլոր այս տուեալներով գինուած ու զրոհուած միայն կարելի պիտի ըլլայ տպրել ու գոյատեւել որպէս գիտակից հայեր ու տեսլապաշտ հաւատաւորներ:

Երանի անոնց որ մեռնելով տպրիլ գիտեն, ու վայ անոնց որ տպրելու սիրոյն կը մեռնին:

ԱՂԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԱՆՈՉԵԱՆ

Աւստրալիա

ՄԵԾ ՇԱՐԺՈՒՄԸ

(Ս. Յարութեան օգնին առիթով)

«Եւ անա շարժումս մեծ եղև»
(ՄԱՏԹ. ԻԸ. 2):

Այս բառերով կ'սրահէ Մատթէոս Աւետարանիչ Յիսուսի յարութեան առաւօտուն՝ գերեզմանի դրան քարը կամ կափարիչը գլորելու եկած հեշտակին իջման առթիւ պատահածը. «Մեծ շարժում»:

Այո՛, մեծ էր շարժումը՝ կատարուած երևութական, տեսանելի աշխարհի մէջ, բայց մանաւանդ մեծ պիտի ըլլար շարժումը՝ մարդերու սրտերէն ու մտքերէն ներս Քրիստոսի յարութեամբը կատարուելիք: Երևութական մեծութիւնը շարժումին պիտի յուշէր դէպքին եզակի, բացառիկ հանգամանքը, իսկ մարդերու ներաշխարհը ալեկոծող մեծ շարժումը պիտի բերէր աշխարհին նոր ու կենարար լոյսը, Քրիստոսի մահուամբն ու յարութեամբը շահուած, մահուան խաւարը պատռող ու անդենականի ճանապարհը մեր մոլորած քայլերուն դիմաց յարգարող պայծառ լուսաստղը:

Նահապետական դարերէն սկսելով, ազգերու պատմութեան և մարդկային կեանքի մէջ դարազուլու բանալու կարելութեամբ շարժումներ իրագործուած են այլազան մարդերու մէջ: Այսպէս, Մովսէս և Պաւտոս, իբրեւ կրօնի հիմնադիրներ, մէկը Արարչին հանդէպ մարդկութեան ըմբռնումը յեղաշրջելու, զայն ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքին ուղղելու, և միւսը՝ բարոյական ամուր հիմերու վրայ խարսխուած ընկերային կարգուսարք մը ստեղծելու շարժումին ռաւիփրաները հանդիսացած են:

Ընկերային, գիտական, բժշկական և այլ մարդերու մէջ ևս, մանաւանդ վերջին դարերուն, իրագործուած են մեծ շարժումներ: Կալիլէօ, Փասթէօր, Մարքս, Ռուսօ, իրենց գիտերով կամ գաղափարաբանութիւններով մեծ շարժումներ, յեղաշրջումներ յաջողած են արձանագրել իրենց բնագաւառներէն ներս: Այդ շարժումներուն իբր հետեանք, հեշտ ու եր-

կար կեանքի մը գրաւականին հետ մարդերոց ընկերային վէրքերուն իբրեւ սպեղանի բերուած է յաճախ խոստումը՝ դասակարգային խտրներու վերացումով պայմանաւոր բարօր ու ապահով կենցաղի:

Քրիստոսի յարութեան առաջացուցած շարժումը սակայն բոլորովին տարբեր ու բարձր է վերոյիշեալ շարժումներէն:

Եթէ Քրիստոսի Մոռենդը աշխարհի խողաղութեան և մարդերու միջև հաճութեան քողքը աւետիսը բերաւ մարդկութեան, Անոր Յարութիւնը բերաւ երաշխիքը մեղքին ու մահուան վրայ տարուած յաղթանակովը շահուած յաւերժական ու անվիշտ կեանքին, ուրիշ խօսքով՝ գրաւականը անմահութեան, որ գերազան իղձն ու երազը եղած է վառշուէր մարդկութեան, նախամարդուն անկումէն և հետագային խաւար դարերէն սկսեալ:

Ի դուր տեղը չէ որ Զատիկը մեծ օգնը կոչուած է արարողգի քրիստոնեաներէն: Եւ մոռնալու չէ մեր հաւատքը Քրիստոսի Յարութեամբը իմաստաւորելու խօսքը մեծ առաքեալին:

Եթէ Յիսուսի Մոռենդը նոր դարաշրջան մը բացաւ մարդկային պատմութեան մէջ, ուրկէ սկիզբ առաւ ներկայիս մեր համաշոյքի բովանդակ տարածքին վրայ կիրարկուած թուականը, Անոր Յարութիւնը յեղաշրջման ենթակից եօթնեակի դրութիւնը, անոր սուրբ օրը փոխելով Շարժէն կիրակիի, որը եթէ ոչ սուրբ՝ գէթ իբրեւ շաբաթվարի հանգըստեան օր կը շարունակուի նկատուի Յիսուսի քարոզած սկզբունքները ռաւահարող վարչաձևերու իսկ կողմէ:

Քրիստոսի Յարութեամբ մենք կը տօնենք լոյսի յաղթանակը խաւարի վրայ, բարութեան ու սրբութեան յաղթանակը՝ չարիքին ու մեղքին վրայ, ճշմարտութեան ու արդարութեան յաղթանակը՝ սուտին ու կեղծիքին վրայ, ներողամտութեան ու անյիշաչարութեան յաղթանակը՝ ռիսկալութեան ու քինախնդրութեան վրայ, ու վերջապէս և մանաւանդ կեանքի յաղթանակը՝ մահուան վրայ:

Պիտի առարկուի սակայն: Որո՞նք են այդ մեծ շարժումին բերած բարիքին շո-

չափելի տուեալները: Չէ՞ վրիպած արդեօք քրիստոնէական շարժումը իր նպատակէն, երբ Քրիստոսի լոյսը ընդունած ժողովուրդներու զաւակներն են որոնք ամենէն անգութ ու քստմենքի ոճիրները գործեցին, չղթալաղերծելով աշխարհակործան զոյգ պատերազմները մեր դարսւն և երբ անոնց սառն ու անտարբեր նայուածքին դիմաց ճղակոտոր եղան ու դեռ կ'ըլլան բազմութիւններ՝ կրօնական, ազգային, ցեղային, դաւանական և այլ մոլեռանդութիւններու հետեանքով: Իսկ բանակը անսուղութեան ու տաժանելի ախտերու մանգաղէն հնձուած մանուկներուն ու եւրախաներուն, Ասիոյ ու Ափրիկէի խուլ անկիւններուն մէջ մինչև մեր օրերը շարունակուող, քաղաքական ոճիրները, գաղթականութեան ալիքները ու ամէն կերպ մոլութիւններէ ապականած մարդերու հեթանոսական լպիրշ բարքերու հետ միայն բաղդատելի կենցաղը, այս բոլորը հերքումը չէ՞ն ըներ Քրիստոսով մեզի տրուած լոյսին ու վսեմ բարոյականին:

Այո, այս բոլորը կը շարունակեն գոյութիւն ունենալ ցաւալիօրէն: Դժբախտ իրականութիւնն է ասիկա, որուն համար առաւել կամ նուազ չափով պարտազանց ու պատասխանատու ենք ամէնքս ալ:

Քրիստոնէութիւնը սակայն չէր եկած առնելու մարդէն կամքի ազատութիւնը, զայն վերածելու կամազուրկ խամաճիկի մը՝ իրմէ վեր ոյժերու ձգողութեան ծիրին մէջ միայն շարժելու սահմանուած, այլ անոր ազատ ու առողջ բանականութեան առջև բանալու ճանապարհը ճշմարտութեան, յաւերժական կեանքի առաջնորդող: Հին Ուխտի մէջ Աստուած լիովին չէր յայտնած ինքզինք մարդկութեան: Նորին մէջ Քրիստոսի մարդացումով վերացաւ պատուարը արարածը Արարիչէն բաժնող ու մեզի տրուեցաւ Փրկչին քայլերուն վրայէն ընթանալով Գողգոթայի ու խաչի տառապանքէն ետք յարութեան արշալոյսը ողջունելու գերագոյն սփոփանքն ու երանութիւնը, որ արդասիքն է Աստուծոյ՝ մարդուն հանդէպ ունեցած սահմանազանց սիրոյն, իր լրու-

մին հասնող Գողգոթայի տրեւոտ բարձունքին:

Քրիստոնէական շարժումը անօրինակ ու տարերային թափով մը պիտի ծաւալէր այդ օրերու ծանօթ աշխարհին ամենահեռաւոր անկիւնները մինչև, ու անոր առջև պիտի սարսէին ու փուլ գային զահեր ու կայսրութիւններ, ու պիտի ծնրադրէին Տրդատներ ու Կոստանդիանոսներ: Մարդերու բոլոր ցեղերը, դասակարգերը, տարիքներն ու սեռերը իր մէջ հաշուող մարտիրոսներու անհուն փառանք մը, իր Դերագոյն վարդապետին օրինակովը, խարոյկներու բոցերէն ու կառափնատներու բարձունքէն պիտի խլէր կարմիր պտակը նահատակութեան ու անմահութեան, առով ապահովելու համար իր մասնակցութիւնը յաղթական Փրկչին ներկայութեամբը սարքուած երկնաւոր կոշունքին: Ոչ մէկ կրօնք կամ գաղափարաբանութիւն իր ետեւէն քաշած է նահատակներու այնքան հսկայ բանակներ որքան Քրիստոնէութիւնը: Ոչ մէկ ուրիշ կրօնի յարած կազմակերպութիւն թշուառ ու աղէտահար բազմութիւններու կարիքները յանձնաձեւելու և վիշտերը ամօքելու համար ձեռք կարկառած է այնքան՝ որքան ըրած են քրիստոնէական կազմակերպութիւններ (բաւ է հոս յիշատակութիւնը ընել Միջազգային կարմիր խաչին և UNRWAին՝ իր զանազան ճիւղաւորումներով): Իսկ քրիստոնէութենէն իր ակունքները առած այլասեռ ու պատկառելի մշակոյթն ու քաղաքակրթութիւնը պիտի մնան ընդմիշտ անմրցելի ու անգերազանցելի:

Ահա, քանի մը կարկառուն գիծերու մէջ վերբերուած, մէկ քանին «մեծ շարժում»ին ծնունդն ու ընծան եղող անկորնչելի ու անփոխարինելի արժէքներէն: Մեզի կը մնայ մեր հաւատքին միացընել իմաստութիւնն ու կամքը՝ Տիրոջ շաւիղէն ընթանալու, մեր հոգիի աշքերուն սրուած տեսողութեամբը նշմարելով ճամբուն խութերէն ու փուլերէն անդին փայլող քաղցր ներկայութիւնը Յարուցեալ Փրկչին:

ԴԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ

Ք Ո Ւ Ն Ը

Քունն է նորէն,
Թաքն իր կապար եկած դնել
իմ կոպերուն,
Զիս տանելու գիրկն անուրջին,
իմ վերքերուն բազմատեսակ
բերելու մեծ ըսպեղանին:

Քունն է նորէն,
Կեղծ բարեկամ,
Ապեռպելու եկած խուրճը
Շեղագոյն իմ ժամերուն:
Զիս զատելու՝
Դիրէն, գիրքէն,
Բանի, բառի
Ամէնիմաստ իմ կոչումէն:

Քունն է նորէն,
Մասն իր կախարդ
Դրած վրան քարքիչներուս,
Կտրելով քիւն բեղուն, յուռքի
իմ խոհերուն անըջասոյզ:

Կը խորսակուին ու կ'իյնան վար
Ամէն արգելի, ամէն պատուար,

Դրոհին դէմ իր տէրութեան
Միանեծան:

Քունն է նորէն, եկած կանուխ,
Եկած գողնալ ժամերն իմ սուղ,
Քունն է նորէն, արքայ անթագ,
Բարի՜ք, չարի՜ք՝
Ժամանումն իր անժամանակ:

Քունն է նորէն,
Եղբայր մահուան,
Նենգ, անծպիտ անոր նման,
Մարել եկած
Աղօտ իմ ջահն մտածութեան:

Քունն է ահա, եղբայր մահուան,
Խոստումներով երազներու՝
«Ալ ու ալուան»:
Բայց ի՞նչ կ'արժեն,
Թէ իսկ քաղցր, մեր երազներն,
Նօս, անմարմին՝ ամպի նման,
Կեանքն է միայն զանձն իրական,
Մեր գոյութեան ամուր կռուան:

Գ. ՀԱՐՏԱՐ



ԳՐԱԿՈՆ

Ե Ղ Ի Շ Է Դ Ո Խ Ր Ե Ա Ն

Հանոյքով տեղ կու տանք երուսաղէմացի եւ Փարիզաբնակ երիտասարդ մտաւորական եւ իր կանխահաս տաղանդին շնորհիւ մեր գրասէր հասարակութենէն լայնօրէն ճանչցուած ու սիրուած կարիկ Պասմանեանի սոյն յօդուածին, ուր համադրական վերլուծումով մը լուսարծակի տակ առնուած է քերթողական վաստակը մեծանուն Պատրիարքին: Պասմանեան այս գրութիւնը կարդացած է 1976ին, Փարիզի մէջ կազմակերպուած գրագէտ հոգեւորականներու նուիրուած ցերեկոյթին: Կ'արտատպենք զայն Փարիզի «Աւետիս» թերթի 6 Նոյեմբեր 1976ի թիւէն, Սրբազանի մահուան յիսնամեակին առիթով:

ԽՄԲ.

Բանաստեղծ, ուսուցիչ, բանասէր, քննադատ, լեզուաբան, թարգմանիչ: Կրկնակի թեկնածու Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Պատրիարք՝ Պալատի եւ երուսաղէմի:

Դուրեան Սրբազանի պատկառազգու եւ հմայիչ անձը՝ ուսուցիչն ու քարոզիչը ձեռով մը խանդարած են ճիշդ ընկալումը իր գործերուն:

Մեծ ուսուցիչ ըլլալը կարեւոր կոչում է, բայց և ապերախտ գործ՝ պայմանաւորուած աշակերտներու կարողութեան չափանիշով, և սահմանուած, լուսոգոյն պարագային, տեղ գրաւելու աշակերտներու խնդրական յուշապատումներու մէջ: Դրեթէ նոյնն է պարագան քարոզիչին:

Բանասիրական, լեզուաբանական և քննադատական ուսումնասիրութիւնները, որոնք կը կատարուին օրը օրին, բոս պահանջքի և ոչ ծրագրեալ ձեռով, ի վերջոյ կ'երթան միաձուլուելու ապագայ բանասէրին աւելի ծաւալուն և համապարփակ գործերուն մէջ՝ մեղի ձգելով քանի մը անձեռնմխելի կտորներ: Ասոնք կը գտնուին Դուրեան Սրբազանի Ուսումնասիրութիւնք եւ Քննադատութիւնք հատորին մէջ (1935):

Այսօր, Սրբազան Պատրիարքի մահուանէ 46 տարի յետոյ, երբ չկան քարո-

զիչն ու ուսուցիչը, իրմէ կը մնայ վերոյիշեալ քանի մը յօդուածներէն բացի՝ Սրբազան Քննադատ (1936) բանաստեղծութիւններու լիակատար ժողովածուէն կոկիկ փունջ մը քերթուածներու, որ վերջին տարիներուն շրջապատուած է անօրոյ և անբացատրելի լռութեամբ մը:

Պիտի խօսիմ միայն Եղիշէ Դուրեան բանաստեղծի մասին, հաւատալով, որ բազում տիտղոսներու տէր և գիրքերու հեղինակ այս արժանաւոր հոգեւորականը՝ բանաստեղծ է ամէն բանէ առաջ և թեքուած ամէն ինչի մէջ:

Եղիշէ Դուրեան 31 տարեկանին կ'այրէ մինչև այդ գրած իր բազմաթիւ քերթուածները: Անոնցմէ փրկուածները թոյլ կու տան ենթադրելու որ իրաւունք ունէր կրակին տալու գրաբարախառն և օրուայ անբանաստեղծական ճաշակին համաձայն գրուած այդ ոտանաւորները:

1904ին, բոլորովին վերանորոգուած, Եղիշէ Դուրեան կը սկսի գրել Հովուական Սրինգին (1909) մաս կազմող բանաստեղծութիւնները:

44 տարեկանին գրել վերակսիւրը կրնայ բացատրել Դուրեանի բանաստեղծութեան նկարագիրը, որուն բանալի բառը հասուն և իմաստուն մարդու մը յայտնաբերած ցերեկեցակութիւնն է, ցերեկ միութիւնը՝

ողողուած այնպիսի լուսաւոր և անաղարտ հաւատքով մը, որ ամէնէն անհաւատներն անգամ կ'այցուին Անհունին սարսուռով:

Հովուական Սրինգի նիւթերը քաղուած են Սուրբ Գիրքէն և կեանք մը փորձառութենէ: Անոնց ոգին կը խոյանայ դէպի հոգեւոր, բարեպաշտ և լուսաւոր հորիւրդոններ:

Ո՞վ է ան որ նառագայթի մը վրայ Պայծառակերպ կը սուրայ, Ու բարձրերէն կ'անցնի վազով մը թերեւ, Ծիածանէ գիծ մը բոլլով իր ետեւ:

Շեւս կ'ակնարկեն անոր աչքերը սիրուն Տիեզերքի ծայրերուն:
Ու մերթ երկրի վրայ նայելով կը դիտէ խոտը դաւաճի, ու մարդուն կեանքն ալ խոտէ:

(«Ճառագայթը»)

Այսօր, մետաղի և շաղախի քաղաքակրթութեան և անդամալոյծ ընող նիւթապաշտ շրջանի մը մէջ, թերեւ աւելի քան երբեք պէտք ունինք ներքին խաղաղութեան և հոգեկան անուշդի: Հովուական սրինգի մը անոյշ ձայնը կրնայ լուսամուտ մը քանալ մեր մէջ այդ աշխարհէն:

Բայց՝ թէ քեզ պակսի հոգի մ'ունկընդիր ... Ընտրէ անապատն ու հովիւ՝ որ ունի
Ունջն ամայութեան ու շուշնջ անհունի:

(«Սրինգի»)՝

Իւրաքանչիւր քերթուած երգ է, նոր օրերու շարական, որ մեղմ կշռոյթով կը բարձրանայ՝ խառնուելու համար Անհունի շունչին:

Բանաստեղծական ոչ մէկ արկածախնդրութիւն. միշտ զուսպ և մանաւանդ միշտ լրջախոհ: Հոգեւոր տեսիլքի բանաստեղծն է ան:

Կու գա՛մ թէ տանիս զիս Գեներեսարէք՝
Ծովակից չհնաղ ափերուն վրայ,
Ուր անուշ հովիւն հետ կը բրբռայ
Արձագանգ մը միտ՝ անշինջ Բառերեղ:

Կու գա՛մ ոստերով ձիթենիներու
Հո՛ն ուր յաղորութեամբ կ'ողջունուիս համակ,

Ու տարածելով ձորձորս ոսփիղ տակ՝
Կը վազեմ փառփիղ շուքն ընդգրկելու:

Բայց կը վարսնիմ գալ Գերսեմանի՝
Ուր փունով մ'աչփես ալիս ծանրանան.
Գուցէ տ'ի՛ն ըլլայ իմ փունը մահուան
Ու մեծ Ոչինչին գիրկը զիս տանի ...:

(«Շտեւէս եկուր»)

Միտք և յոյզ կը միանան, կը խառնան, դառնալու համար պատկերներ, խորհրդանշներ: Դուրեան Սրբազանի մօտ հազուադէպօրէն պատահող յորդումներն անգամ գիտակցուած են, սանձուած: Բոլոր բանաստեղծութիւնները աշխատուած են, զգացումը՝ մշակուած:

Անմիջականութիւնը հեռու է Դուրեան Սրբազանի քերթողութենէն, ուրկէ և վտա՛նգը այդ տեսակի քերթողութեան:

Բանաստեղծութեան կանխամտածին ըլլալը հեղինակը կը տանի պատմողականութեան: Ասիկա մասամբ խոցելի է, որովհետեւ վերջ ի վերջոյ չկայ եղիշէ Դուրեանի պատմութիւնը. Սուրբ Գիրքն է անոր ներշնչման աղբիւրը: Հակառակ անոր, որ իրենց մանրամասնութեանց մէջ յաճախ նոր են մեկնաբանութիւնները, ընդհանուրին կաղապարը կը ներկայանայ պատրաստի: Երբեմն կրնանք նաեւ զուտ անձնական տպրուածքներ պնդել տողերուն մէջէն, այսուհանդերձ չենք դադրիր դուքսէն եկած կաղապարի մը պատկերացումը ունենալէ:

Կը խանգարէ՞ այս ... թերեւ, բայց մեր միջնադարեան մանրանկարիչներուն գեղանկարչութիւնն ալ ա՛յդ է, Շնորհալին ամբողջութեամբ ա՛յդ է, միայն նորեկացին նեղ կը գտնէ Աստուածաշունչի կաղապարները և կը փշրէ զանոնք, քորուքանդ կ'ընէ իր ջղուտ ռիթմով և բանաստեղծական կատաղի յորձանքով:

Դուրեան Սրբազան գրած է նաեւ շարք մը ազգային քերթումներ, որոնք համադրուած են Տոհմային և նիւթապարի տակ: Ասոնք շունին կրօնական քերթուածներուն ոյժը: Արդեօք որովհետեւ

մեր հայրենասիրական քերթողութիւնը բարձունքի՞ հասած է Սիամանթոյով, վարուժանով, Տէրեանով, Չարենցով... (յիշելու համար քանի մը անուն): Նուա՞ղ հարուստ է միթէ մեր միջնադարեան կրօնական բանաստեղծութիւնը... ո՛չ ամենէն ինչ, կը նշանակէ պարզապէս, որ եղիշէ Դուրեան նոր ձայն և նոր կշռոյթ բերաւ մեր կրօնական դարաւոր բանաստեղծութեան:

Թաց բիբերեղ գլորող շիւթերն այդ վայրէջ Բան մ'ունին դեռ հին շարքն այն դրացի, Ծաղիկ մը չե՛ս կրնար ըլլալ դրախտիս մէջ. Մի՛ մօտենար դու ինծի:

Դեռ երկրաւոր անուշութիւնք մեղրին Յամառօրէն շուրթերուդ փով կը յածի, Որք հեծանքի հպումներէն կը քմրին. Մի՛ մօտենար դու ինծի:

Այգեսանին մէջ դեռ կ'ուզես արքնալ՝ Որ լանջիդ որքի ողկոյզներուն հետ մրցի, Դեռ փրփուրով կ'ուզես գինին ու կաթն ալ. Մի՛ մօտենար դու ինծի:

Խառնելով շունչդ հեծամբմունջ զով սիւքին՝ Մի՛ր այն վայրն ուր հառաչներս հանցի, Այօրքի ձայն մ'եղիր կամ ճիշտ համարին, Որ մօտենաս դու ինծի:

(«Մի Մերձենար Յիս»)

Եղիշէ Դուրեանի «Կին»ը այնքան անմեղ է և մաքուր, որ մայրութենէն ալ անդին կ'անցնի՝ հասնելու համար մինչև աննիւթականը, եթերայինն ու երազայինը: Շարականներու հեղինակներուն չափ

յանդուգն ըլլալու կարիքը չունի Դուրեան, երբ կ'արտայայտուի կնոջ մասին.

Վրան եր առած խեղճող ցաւերուն
Աւերքը ծպտող յոգիկն իր լայնցի,
Ու սուրբ երկիւղի դողով մը սարսուռն՝
Հազիւ իր փայլերն կը հանեն փոշի:
(«Տեռատես Կինը»)

Եղիշէ Դուրեանի գլխաւոր արժանիքը կը մնայ կառոյցի ու ձայնի անթերի վարպետութիւնը.

Անէ՛ծֆրդ, Հայր, փոխեց ոսկիս մուր պղինձի.
Բայց ֆանի որ շամբուտ կուռք մը պէտք էր
ի՛նծի՝
Ես պղինձով ալ պատրաստեմք'երս ձուլեցի:

Անէ՛ծֆրդ, Հայր, զոհար ֆարեա դարձուց
խեցի.
Բայց ֆանի որ գիրկ մը գրգռեմ պէտք էր ի՛նծի՝
Թամարներու կուրծքէն զանոնք ես կախեցի:
(«Անառակը»)

Պետրոս Դուրեանի մահով Արևմտահայ բանաստեղծութիւնը 35 տարուայ ընդհանուր ամփոփեան շրջան մը կը բուրդէ մինչև Մեծարեւոյցի «Ծիածան»ն ու «Նոր Տաղեր»ը, կը թռի թէ Եղիշէ Դուրեան փորձած է իր երէց եղբոր մահով բացուած վիճը լեցնել, կամուրջ հանդիսանալով անոր և Մեծարեւոյցի միջև:

Որքանո՞վ յաջողած է...

Եղիշէ Դուրեան հայ կրօնական բանաստեղծութեան մեծագոյն դէմքերէն է, թերևս մեծագոյնը՝ Ներսէս Շնորհալիէն յետոյ:

ԿԱՐԻԿ ՊԱՍՄԱՃԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՈՒՍԱՆՑԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայերէն ձեռագիր Աւետարաններէն ոմանց լուսանցքներուն վրայ կը տեսնուին՝ ընդհանրապէս գրչին ձեռքով արձանագրուած բառեր, իբրեւ տարընթերցում, սրբագրութիւն կամ բացատրութիւն:

Սոյն յօդուածով կը ներկայացնենք Ս. Յ. թիւ 3252 Աւետարանին պարունակած լուսանցագրութիւնները, որոնք բաւական ուշագրաւ են իրենց թիւով և բնոյթով:

Ձեռագրին սկզբնական յիշատակարանը կորսուած է. բայց նկատի առնելով գործածուած մագաղաթը, գրչութեան տիպը և մանրանկարչութեան արուեստը, կարելի է զայն զետեղել յետոսուիդեան շրջանի Կիլիկեան Աւետարաններու շարքին, այսինքն ԺԴ. Դարու երկրորդ կիսուն մէջտեղերը:

Հայերէն բնագրին համեմատութեան համար գործածած ենք 1929 թուականին Վիեննա տպուած Աստուածաշունչը, իսկ յունարէնին համար՝ 1914ին Լոնտոն տպուած Նոր Կտակարանը:

ՄԱՏԹԷՈՍ

1. — Ը. 15. — յոտն եկաց և պաշտէր զնա (Ձեռ.)

զնոսա (լս.)

2. — Թ. 8. — իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան
երկեան

Նոյն տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ:

3. — Ժ. 29. — դանգի միտջ վաճառին
ասարի

Թունարէն, ἀσσαρίου πωλείται

4. — Ժ. 35. — Քանզի եկի քակել զայր ի հաւրէ իւրմէ, և զդուստր ի մաւրէ
իւրմէ

Ընդգծեալ բառերը կը գտնուին լուսանցքի վրայ:

5. — ԺԱ. 19. — Եւ արդարացաւ իմաստութիւն յորդոց իւրոց
ի զործոց

Նոյն տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ:

6. — ԺԴ. 6. — Կաքաւեաց դուստրն Հերովդի[ադ]այ
Յնր. τῆς Ἡρῳδιᾶδος

Անկիւնաւոր փակագիծով դրուած առաւել կը գտնուին լուսանցքի վրայ:

7. — ԺԵ. 6. — և խոտէք զբանն Աստուծոյ
պատկերան

Նոյն տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ:

8. — ԺԵ. 7. — Բարւոք մարգարէացաւ ի վերայ ձեր Եսայի
վասն

9. — ԺԶ. 1. — Խնդրէին ի նմանէ նշան յերկնից
Ընդգծեալը լուսանցքի վրայ է, մինչ տողին մէջ իր տեղը բաց մնացած է,
10. — ԺԶ. 21. — Բազում չարչարանս չարչարել
անարգել
Եռնարէնը պարզապէս կ'ըսէ παλλὰ παθεῖν
11. — ԺԷ. 24. — Թաքաւորք ազգաց
երկրի, ինչպէս ունի յունարէնը,
12. — ԺԸ. 24. — պարտապան մի բիւր քանգառոյ
բազում թաղանցոց
μυρίων ταλάντων
13. — ԻԱ. 15. — աւրհնութիւն որդւոյ Դաւթի
ովսանցա
14. — ԻԲ. 16. — և ոչ հայիս յերեսս մարդոյ
կան
ἀνθρώπων
15. — ԻԵ. 20. — որ զհինգ քանքարն առ
τάλαντα
Լուսանցադրութիւն՝ կէսը կտրուած, կը լրացնենք առնելով ուրիշ ձե-
ռագրէ մը. ստաղանան [կշռոյ] անուն է և [ոչ թռոյ]»:
16. — ԻԶ. 15. — Եւ նոքա կեռեցին նմա
ուխեցին
ἔστρεσαν
Վիեննա, լս. կամ, խոստացան,
17. — ԻԶ. 41. — զի մի անկանիցիք ի փորձութիւն
գայցե
ἵνα μὴ εἰσέλθῃτε εἰς πειρασμόν
18. — ԻԶ. 52. — արով անկանիցիք
կորնչիցիք
ἀπολούνται
19. — ԻԷ. 6. — ոչ է արժան ընդունել զայդ ի կորբան
յընծայանցն
εἰς τὸν κορβανῶν
20. — ԻԷ. 33. — անուանեալ Գողգոթա
գող
21. — ԻԷ. 56. — և Մարիամ Յակովբայ և Յովսէպ մայր
փայ
Այս տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ:

ՄԱՐԿՈՍ

1. — Ա. 2. — որպէս և գրեալ է յԾաւի մարգարե
ի մարգարես
Այս տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ:
2. — Ա. 13. — զաւուրս քառասուն
և քիւ, և զիւր
τεσσαράκοντα ἡμέρας

3. — Բ. 14. — Ետես զՂեւի Ալփեայ
զՅակովբոս
Λευειν τον τον Αλφαιου
4. — Բ. 16. — ուսեֆ և (և) ըմպեֆ
սէ պե
Վիհննա, լս. եւ ըմպե, «ի բազումս պակասէ»
սեպս
5. — Դ. 12. — զի տեսանելով տեսցեն, և մի՛ տեսցեն
զիտեսցեն
իծատ
6. — Զ. 17. — Վասն Հերովդիայ
աղայ
Ηρωδίαδα
Նոյնը կրկնուած է նաև 22րդ համարին մէջ,
7. — Ը. 8. — Եւթն զամբւղ
արմաւեն[ի]
սփիւրիղայ]]
σπυριδασ
8. — Թ. 30. — յերիբ աւուր յառնե
րիցե
Թնր. 31
ἀναστρέφεται
9. — ԺԴ. 25. — և աստեղք յերկնից քաւրափեսցին
անկցի[ն]
10. — ԺԴ. 12. — յորժամ զգասիկն զհնուին
զպաս[ն]ֆն
11. — ԺԵ. 4. — տես քանի ամբաստանեն զքէն
վկայեն
Այս տարբերակը կը տեսնուի յունարէն բնագրին մէջ ալ,
12. — ԺԵ. 46. — պատեաց կտաւովն
պաստառակալ

ՂՈՒԿԱՍ

1. — Ա. 28. — Եւ եկեալ առ նա ասէ. ուրախ լիբ բերկրեալդ
մտեալ
աղշոյն
εισελθών Χαίρε
2. — Ա. 61. — որոյ կոչի անուն Յովնանեկս
անուն այս
τοῦ ὀνόματι τούτου
3. — Բ. 41. — ի տաւն զասկին
պասեֆ
τη ἑορτῇ τοῦ πάσχα
4. — Գ. 19. — Վասն Հերովդիայ
աղայ
5. — Զ. 21. — Երանի որ քաղցեալ են այժմ, զի յադեսցին
իցեֆ
իցիֆ

- Երանի է որ լաց ալժժ, չի ծիծաղեսցի՜ն
 յգհֆ Իջիֆ
 Հմմտ. Տպ. Վիեննայի, ծանօթութիւն լուսանցքի,
 6. — է. 33. — ոչ ուտէր և ոչ ըմպէր
 հաց գիցի
 Հմմտ. ըստ վերնոյն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

1. — Գ. 4. — որ ծերն իցէ
 ծնեալն
 γέρων ὢν
 2. — Զ. 29. — յայն որ առաքեացն զիս
 զոր առաքեացն նա
 εἰς ὃν ἀπέστειλεν ἐκεῖνος
 3. — ԺԲ. 28. — փառաւորեա զանուն քո
 զորդի
 τὸ ὄνομα
 4. — ԺԲ. 30. — եկրն բարբառս այս
 եղել
 γέγονεν
 5. — ԺԴ. 17. — ոչ կարէ ընդունել
 առնուլ
 λαβεῖν
 6. — ԺԶ. 26. — եթէ ես հաւցից զՀայր
 աղաչեցից
 ἐρωτήσω
 7. — ԺԶ. 29. — ահա արդ յայնցութեամբ խաւար
 համարձակ
 ἐν παρουσία
 8. — ԺԸ. 28. — չի ուտիցեն զգասիկն
 պասեցն
 9. — ԺԹ. 17. — և կոչէր երբայեցերէն Գողգոթա
 գող
 Γολγοθᾶ

Այս տարբերակներուն ծագումը բաւական հին կը թուի, քանի որ ասոնցմէ շատերուն կարելի է հանդիպիլ հնագոյն ձեռագիրներու մէջ ալ: Տեսնել, օրինակի համար, Սերաստիոյ թիւ 25 Աւետարանին նկարագրութիւնը, որ կը պարունակէ 38 լուսանցագրութիւններ (Յուցակ 244. Սերաստիոյ, էջ 27):

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՆՈՐ ՀԱՒԱՔԱԾՈՆ ԹԱՆԳԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

ՍՄԲԱՏ. — Ռուբինեան իշխանութեան պատմութենէն գիտենք որ Լեոն ունէր հինգ մանչ զաւակներ, որոնք ժամանակի ընթացքին իրարու դէմ կռուեցան և ամէնն ալ ժամանակաւորապէս անցան իշխանութեան գլուխ: Երբ Հեթում Կ. Պոլիս գնաց իր քրոջ Ռիթայի ամուսնութեան ներկայ ըլլալու համար, Սմբատ առիթէն օգտուեցաւ և ինքզինք թագաւոր հռչակեց և Սոոյ մէջ ալ հանդիսաւոր օծում տեղի ունեցաւ: Թէև Սմբատ հազիւ թագաւորեց երկու տարի, ան հասանց արծաթ և պղինձ դրամներ: Արծաթները կը յիշեցնեն Լեոն Ա. ի դրամները, կարծես շեշտելով թէ ինք Սմբատ Մեծն Լեոնի արժանաւոր յաջորդն է: Արծաթներուն ոմանց տիպը ճիշդ Լեոնի դրամներուն պէս է, իսկ երկրորդ դրամներուն ա. կողմին վրայ թէև թագաւորը նստած է առիւծազարդ գահին վրայ, ան ձախ ձեռքին մէջ շուշանի տեղ բռնած է լախտ մը: Սմբատի արծաթները հազուադէպ են, անոնց ա. կողմին և բ. կողմին վրայ կը տեսնուի հետեւեալ գրութիւնը.

ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ:

Հաւաքածոն կը պարունակէ երեք հատ արծաթներ:

Արծաթ դրամ, Silver trams, *1653a, *1664, 1673:

Սմբատ թողած է նաև կէս-դրամներ, որոնք հաւաքանց հազուադէպ են:

Սմբատի պղինձ դրամները փոքրիկ են և տիպով կը յիշեցնեն Հեթում Ա. ի ձիաւոր պղինձները: Ա. կողմը կը տեսնուի թագաւորը որ աջ կ'ընթանայ, իսկ բ. կողմը կայ զարդարուն խաչ մը: Երկու

կողմի գրութիւններն են, բաղմաթիւ զանազանութիւններով.

ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Հաւաքածոն կը պարունակէ ինը օրինակներ:

Պղինձ, Copper, *1693, *1694, 1626, 168x, 169x, 1690, 1701, 1686, 168x, 1711v, 1716:

ԿՈՍԱՆԴԻՆ Ա. — Ինչպէս գիտենք, Կոստանդին տեսնելով իր եղբոր՝ Սմբատի անօրէն ընթացքը, անոր դէմ ելաւ Սոոյ պարիսպներուն տակ և եղբայրասպան կռիւով յաջողեցաւ Սմբատի յաղթել և գահը գրաւել: Կոստանդինի իշխանութիւնը հազիւ տարի մը տևեց, բայց կ'երևի ինքզինքը ժողովուրդին ծանօթացնելու և սիրցնելու համար հասանց շատ գեղեցիկ ոսկիէ, արծաթէ և պղինձէ դրամներ: Ոսկիներէն միայն երկու հատ գոյութիւն ունի, իսկ արծաթները հաւիազանց հազուադէպ և պղինձները շատ հազուադէպ են:

Արծաթ դրամներուն ա. կողմին վրայ ձիաւոր թագաւորը աջ կ'ընթանայ, և աջ ձեռքով վեր բռնած է սուր մը: Գրութիւնն է,

ԿՈՍԱՆԴԻԱՆՈՍ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ:

Իսկ բ. կողմին վրայ կը տեսնուի թագաւորը կանգնած արքայական պատմուճանով, աջ ձեռքով վեր բռնած սուր մը և ձախով խաչ մը: Գրութիւնն է,

ԿԱՐՈՂՈՒԹԵԱՅ Է ԹԱԳԱՒՈՐ, ԽԱՐԵՐԱՆՔՆԵՐՈՎ:

Պղինձներուն ա. կողմը կը նմանի արծաթներուն բ. կողմին, իսկ գրութիւնը՝

ԿՈՍՏԱՆԴՆՈՍԻ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ:

Իսկ բ. կողմին վրայ կը տեսնուի խաչ մը, և գրութիւնը՝

ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Այս շատ հազուագիւտ արծաթներէն և պղինձներէն հաւաքածոն կը պարու-նակէ մէկ մէկ օրինակ:

Արծաթ գրամ, Silver tram, *1726:

Պղինձ, Copper, *1730:

ԼԵԻՈՆ Գ. — Հեթում Բ. իրեն յաջորդ կարգեց իր Թորոս եղբոր զաւակը և քաշ-ուեցաւ վանք: Լեոն թէև թագաւոր օծ-ուեցաւ պաշտօնապէս 1301ին, ան գահըն-կէց եղաւ 1306ին, այնպէս որ դրամներ հասանեց 1301էն մինչև իր մահը՝ 1307ին:

Լեոնի զահակալութեան ժամանակ եր-կիրը թէ՛ քաղաքական և թէ՛ տնտեսական տաքնապի մէջ ըլլալով, դրամներու կշիռը և թէ արծաթի պարունակութիւնը իջաւ և Լեոնի դրամները սկսան ճանչցուիլ իբր քաղուորին: Վաճառականները և սեղա-նափոխները դրամները կը դատէին ար-ծաթի պարունակութեան համեմատ:

Լեոնի արծաթներուն ա. կողմին վրայ կը տեսնուի ձիաւոր թագաւորը որ աջ կ'ընթանայ, ձախ ձեռքով բռնած է ձիուն սանձը, իսկ աջ ձեռքով լակոտ մը, որ կ'երկարի ուսէն վեր:

Ա. կողմին գրութիւնն է, տարբերու-թիւններով՝

ԼԵԻՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ:

Իսկ բ. կողմին վրայ կը տեսնուի ա-ռիւծ մը որ աջ կը քալէ: Կայ կոնակէն վեր բարձրացող խաչ մը: Գրութիւնն է՝

ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Հաւաքածոն կը պարունակէ 11 հա-տարկներ:

Քաղուորին Պա. Թիւ, Takvorin Be-
doukian No. *1734, 1735a, 1741, 1745,
*1747, 1785v, 1779av, 1796a, 1796v,
1798, 1801v:

Լեոնի պղինձները կը նմանին իր հօրեղբոր՝ Հեթում Բ.ի պղինձներուն, ո-րոնց վրայ կը տեսնուի թագաւորը նստած ծալապատիկ, արեւելեան ձեռով:

Գրութիւնն է՝

ԼԵԻՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ:

Իսկ բ. կողմը կը տեսնուի խաչ մը, և գրութիւնը՝

ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Հաւաքածոն կը պարունակէ հինգ պղինձներ:

Փոլ, Պա. Թիւ, Pogh, Bed. No.
*1807, 1809, *1810, *1816, 181x, 181x,
181x, 181x:

ՕՇԻՆ. — Օշին յաջորդեց իր եղբոր և տիրապետեց 12 տարի: Այս միջոցին ան հասանեց դրամներ, կէս-քաղուորին-ներ և փոքրիկ պղինձներ որ փոլ կը կոչուին: Այնպէս կ'երևի թէ հակառակ մշտական պատերազմներու Մահմետական-ներու դէմ, Կիլիկիան Հայաստան դեռ կազմակերպուած պետութիւն էր և Օշին մասնաւոր ջանք թափած է վաճառակա-նութեան զարկ տալու համար: Թերևս միջազգային առևտուրը զարգացնելու հա-մար ան սկսաւ հասանել ընտիր արծաթով դրամներ, որոնք ծանրութեամբ և զտու-թեամբ կը հաւասարէին Լեոն Ա.ի և Հե-թում — Ջապէլի դրամներուն: Ասոնք եր-բեմն կոչուած են օծման դրամներ, բայց իրականութեան մէջ անոնք բարձրորակ դրամներ են: Իսկ հասարակ արծաթները որ քաղուորին կը կոչուին շատ աւելի պակաս են ծանրութեամբ և կշիռով:

Օշինի դրամները շատ կը նմանին Լեոն Ա.ի արծաթներուն, միայն թէ գա-հին բազմած թագաւորին ձախ ձեռքին վերև կը տեսնենք դէպի գլուխը երկա-րող աջ մը:

Ա. կողմին գրութիւնն է՝

ԱԻՇԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ:


Իսկ բ. կողմինը՝

ԿԱՐՈՂՈՒԹՔՆ. ԱՍՏՈՒԾՈՅ, տարբե-
րութիւններով:

Այս դրամները հազուագիւտ են, և հաւաքածոն կը պարունակէ երեք օրինակ:

Դրամ, Պա. Թիւ, Tram, Bedoukian
No. *1839av, 1844, *1845:

Օշինի քաղուորինները շատ կը նմա-նին Լեոն Գ.ի քաղուորիններուն, գրու-թիւնն ըլլալով՝



Կարելուր նմուշներ՝ Զարեն Պետկեանի Նկարագրած հաւաքածոյէն:

ԱԽՇԻՆ ԹԱԳԱԽՈՐ ՀԱՅՈՑ:

Իսկ բ. կողմի գրութիւնը նոյնն է, Լեոնի նման,

ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Հաւաքածոն կը պարունակէ վեց բազմութիւններ:

Թագուորին Պտ. Թիւ, Takvorin, Bed. No. *1853, 1857v, *1867, *1872, 1905, 1908:

Օշինի փողերը շատ փոքրիկ են և իրական փող են: Անոնց ա. կողմին վրայ կը տեսնուի թագաւորը, բազմած գահին վրայ, ունենալով խաչ մը աջ ձեռքին մէջ և շուշան մը ձախին: Դրութիւնն է՝

ԱԽՇԻՆ ԹԱԳԱԽՈՐ ՀԱՅՈՑ:

Իսկ բ. կողմին վրայ կը տեսնուի խաչ մը, և

ՇԻՆԵԱԼ կամ ՇԻՆԱՄ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Հաւաքածոն կը պարունակէ 6 փողեր:

Փող Պտ. Թիւ Pogh, Bed. No. *1941v, 1942v, 1941, *194x, 194x, 194x:

ԼԵԽՈՆ Դ. — Օշինի յաջորդեց իր որդին Լեոն Դ., որ տիրեց 22 տարի: Ան հատանեց արծաթ բազուորիկներ, որ տիպով շատ կը նմանին իր հօր արծաթներուն: Լեոնի դրամները սակայն աւելի փոքր են և արծաթով աւելի պակաս, և պատրաստուած քիչ խնամքով: Ասոնք անշուշտ կը ցոլացնեն երկրին տկարացումը:

Թագուորիկներու վրայի գրութիւնն է՝ ԼԵԽՈՆ ԹԱԳԱԽՈՐ ՀԱՅՈՑ,

և բ. կողմը՝

ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Լեոն Մէմլուքներու յարձակումներէն ազատելու համար, ստիպուեցաւ խաղաղութիւն խնդրել և անոնց վճարեց մէկ միլիոն և երկու հարիւր հազար բազուորիկներ տարեկան տուրք: Այս պատճառաւ Լեոն Դ. ի բազմաթիւ դրամներուն վրայ կը տեսնուի Արաբերէն կրկնադրոշմ մը:

Հաւաքածոն կը պարունակէ 19 բազմութիւններ, որոնցմէ երկուքը կը կրեն Արաբերէն գրութիւն:

Թագուորին Պտ. Թիւ Takvorin, Bed. No. 1951, 1951v, 1954, 1954v, 1955,

1966, *1967, 1968v, 1968v, 1970, *1973, 1973v, 1973v, 1976v, *1990, 1990v, 1992v, 2027, 2028:

Պշինձէ փողերուն վրայ թագաւորը կը տեսնուի նստած առիւծազարդ գահին վրայ և կամ աթոռակի նմանող գահին վրայ: Հետաքրքրական է նաև տեսնել մեծ ու փոքր պշինձներ, որ թերևս կը ծառայէին իբր բարեկ և փող:

Հաւաքածոն կը պարունակէ հինգ պշինձներ:

Պշինձ փող Պտ. Թիւ Copper Pogh, Bed. No. 1996, 200x, *2006, 2006v, 2010:

ԿԻ ԼՈՒՍԻՆԵԱՆ. — Լեոն զաւակ չունենալով իրեն յաջորդ նշանակած էր իր հեռաւոր ազգականներէն Կի Լուսինեանը: Կի թէև քաջարի զինուոր էր, բայց հայկական կրթութիւն չունենալով ինքզինք Յրանսացի կը նկատէր և չկրցաւ ինքզինքը սիրցնել տալ: Իր արարքները պատճառ եղան որ հայ իշխանները զինք սպաննեն հազիւ երկու տարուան զահակաւութենէն վերջ: Այս երկու տարուան մէջ Կի շատ քիչ դրամ հատանեց և անոր արծաթ և պշինձ դրամները հազուադիւս են:

Շարունակելով ընդունուած դրամական տիպը ան հատանեց դրամներ որ կը նմանին իր երկու նախորդներու արծաթներուն:

Ա. կողմին ձիաւոր թագաւորին գրութիւնն է՝

ԿԻ ԹԱԳԱԽՈՐ ՀԱՅՈՑ:

Իսկ բ. կողմին վրայ կը տեսնուի՝

ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Հաւաքածոն կը պարունակէ երեք արծաթներ:

Թագուորին Պտ. Թիւ Takvorin, Bed. No. *2032, *2034:

ԿՈՍԱՆԴԻՆ Գ. — Կոստանդին արքայական սերունդէն չէր, բայց հեռուէն ազգականական կապ ունէր Ռուբինեաններու տան հետ: Ան իշխեց 19 տարի և իր թագաւորութիւնը եղաւ անկման շրջան մը Կիլիկիան Հայաստանի համար:

Շատ հետաքրքրական է որ Կոստան-



2006

2032


2034



2054

2057v


2081





2128

2134

2168v



GOSD.
IV



LEVON V

LEVON V

LEVON V

LEVON V



2247v

2246v

Կարելու նմուշներ՝ Զարեհ Պետկեանի նկարագրած հաւաքածոյէն:

դիւնի արծաթներէն ոմանց վրայ կը տեսնենք ՇԻՆԵԱԼԻ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՏԱՐՍՈՆ գրուած թիւնը, ցուցնելով որ Տարսոնի մէջ ալ փողերանոց մը գոյութիւն ունէր: Չենք գիտեր թէ որքան ժամանակ այս փողերանոցը գոյութիւն ունեցած է և կոստանդինի դրամներէն զատ ի՞նչ դրամներ կոխուած են հոն:

Կոստանդինի քաղուորիկները իր նախորդներէն նուազ արծաթ կը պարունակեն և աւելի քիչ խնամքով պատրաստուած են:

Կոստանդին շարունակեց հատանել դրամներ ծանօթ տիպով, ա. կողմը թագաւորը ձիաւոր աջ կ'ընթանայ, իսկ բ. կողմը առիւծ մը որ աջ կը քալէ, կռնակին ունենալով խաչ մը:

Գրութիւնն է՝

ԿՈՍՏԱՆԴԻՆԻ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

ՇԻՆԵԱԼԻ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ (կամ ՏԱՐՍ) զանազան տարբերութիւններով:

Հաւաքածոն կը պարունակէ 37 հատ կոստանդինի քաղուորիկներ:

Թաղուորիկ Պտ. Թիւ Takvorin, Bed. No. *2054, 2055, *2057v, 2069av, 2069, 2068v, 2070, *2081, 2080v, 2084v, 209x, 2092, 2093, 2094, 2096, 2100, 2100v, 2108, 2108, 2114, 2107, 209x, 209x, 209x, 210x, 210x, 210x, 210x, 210x, 210x, 210x, 210x, 210x, *2128:

Պղինձ փողերը բաւական հազուագիւտ են և տիպով կը նմանին նախնիներուն:

Ա. կողմին կը տեսնուի գահաձիւղ թագաւորը, աջ ձեռքով բռնած խաչը, իսկ ձախով՝ շուշանը: Իսկ գրութիւնը՝

ԿՈՍՏԱՆԴԻՆԻ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ,

Իսկ բ. կողմը՝ խաչ մը,

ՇԻՆԵԱԼԻ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ (կամ ՏԱՐ) զանազան տարբերութիւններով և կրճատուներով:

Հաւաքածոն կը պարունակէ երեք պղինձներ:

ԼԵՒՈՆ ԲՈՒՆԱԿԱԼ. — Կոստանդին Գ. ի մահէն վերջ, այնպէս կ'երևի թէ գահը ձեռքն էր Լեւոն անունով անձի մը: Լեւոնի ով ըլլալը վստահօրէն յայտնի չէ, բայց

հաւանական է որ ան կոստանդինի որդիներէն մէկն էր: Գիտենք որ ան հանած է դրամներ իր անունով, և այսպէսով օրինաւոր թագաւոր էր և ուստի պատճառահայ թռնակաւ (usurper) կոչուել:

Որովհետեւ Լեւոն իշխեց միայն երկու տարի, անոր դրամները հազուագիւտ են: Հետաքրքրական է նաև նկատել որ այս Լեւոնի դրամներուն վրայ անունը գրուած է ԼԵՎՈՆ և ոչ թէ ԼԵՒՈՆ:

Նորէն քաղուորիկները և փողերը շատ կը նմանին նախորդներուն: Փողերը չափազանց հազուագիւտ են:

Թաղուորիկներուն և փողերուն վրայի գրութիւնն է՝

ԼԵՎՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

ՇԻՆԵԱԼԻ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Հաւաքածոն կը պարունակէ չորս քաղուորիկներ և մէկ իսկական փող: Թաղուորիկ Պտ. Թիւ Takvorin, Bed. No. 2132, 2133, *2134, 2155:

Փող Պտ. Թիւ Pogh, Bed. No. *2168a:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. — Լեւոն կ'երևի գահէն հրաժարեցաւ և իր տեղը նստաւ Նեզրի Հեթումի որդին՝ Կոստանդինը: Երկրին կացութիւնը անտանելի դարձած էր և քաղաքական ու տնտեսական կացութիւնը կը ցուցուի Կոստանդինի դրամներուն մէջ: Կոստանդին Դ. հատանեց մեծաքանակ դրամներ թշնամին գահացնելու համար, բայց կը տեսնուի որ այս դրամները կոխուած են հապճեպով և շատ քիչ արծաթ կը պարունակեն:

Կոստանդին Գ. ի և Դ. ի դրամները դժուար է իրարմէ զանազանել, բայց երբ նկատի առնենք անոնց համեմատական կշիռը, որ արծաթի պարունակութեան չափն է, կրնանք վստահօրէն այն բոլոր դրամները որ L կամ S նշանները ունին ա. կողմին կամ բ. կողմին դաշտին մէջ, տալ Կոստանդին Դ. ի (*):

(*) P. Bedoukian, «The Coinage of Constantin III and IV, Kings of Lesser Armenia», The American Numismatic Society Museum Notes VI (1954), pp. 193-199, Pl. XX.

ինչպէս Լեւոնի, նոյնպէս ալ Կոստանդին Դ. ի իսկական փոքրիկ փողերը նոր մէջտեղ ելած են և շատ հազուադիւր են:

Թագուորիններու և փողերու վրայի գրութիւնները նորէն սովորական են, այսինքն՝

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

և ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ,

զանազանութիւններով և կրճատումներով:

Հաւաքածոն կը պարունակէ 33 հատ քաղուորիններ և մէկ հատ իսկական փող:

Որովհետեւ Կոստանդին Գ. և Դ. մեծ քանակութեամբ քաղուորիններ կոխեցին հապճեպով, անոնք լաւ շինուած չեն և անոնց վրայի անհատնում գրութիւնները կարելի չէ դասաւորել: Այս պատճառով կարելի չէ հաւաքածոյին 33 քաղուորիններուն Պտուկեան forփուսի թիւ տալ:

ԼԵՒՈՆ Ե. ԼՈՒՍԻՆԵԱՆ. — Կոստանդին Դ. ի սպանութենէն յետոյ հայերը կիպրոսի Պետրոս Թագաւորին դիմեցին որ Լեոնը կիլիկիա զրկէ երկրին Թագաւոր ըլլալու համար:

Արդէն Թագաւորութիւնը կը պարունակէր փոքր հողամաս մը լեւոնային շրջանի մէջ, մշտապէս ենթակայ թշնամիներու յարձակումին:

(Վերջ՝ 3)

Լեոն Թագաւորեց աւելի քան տարի մը, մինչև կիլիկիոյ իշխանութեան վերջնական անկումը:

Այս միջոցին ան հատանց փոքրիկ պիլոն (արծաթադին) և պղինձ փողեր, որոնք բաւական հազուադիւր են,

Հաւաքածոն կը պարունակէ երեք պիլոններ և մէկ հատ փող:

ՅԵՏ - ՌՈՒԲԻՆԵԱՆ ՇՐՋԱՆ. — Կը կարծուի թէ Սոյ գրաւումէն և կիլիկիոյ Թագաւորութեան անկումէն յետոյ, հայկական դրամահատութիւնը դադարեցաւ:

Սակայն գոյութիւն ունին կարգ մը հազուադիւր պղինձներ, որոնք կիլիկեան վերջին շրջանի Կոստանդիններու դրամներուն կը նմանին, բայց գրութիւնը շատ աղաւաղեալ ըլլալուն՝ կարելի չէ կարդալ:

Չենք գիտեր թէ այս դրամները ո՞ւր, ե՞րբ և որո՞ւ կողմէ կոխուած են, բայց տարակոյս չկայ թէ անոնք կոխուած են կիլիկիոյ մէջ շրջաբերութեան համար:

Հաւաքածոն կը պարունակէ երկու օրինակներ այս հազուադիւր դրամներէն:

ԶԱՐԵՀ ՊՏՈՒԿԵԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ԶԵՄԵՐ

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Հետևեալ գրութիւնը վերբերուած է Մայր Աթոռոյ Միաբան եւ երբեմնի Դիւանապետ Գեորգ. Տ. Յուսիկ Արքեպս. Զօհրապեանի քղբածրաւէն: Կը հրատարակենք զայն իւր շահեկանութեանը համար, մանաւանդ որ հոն նկարագրուած անցուղաւորները մինչեւ օրս անձանք մնացած են շահեւորուած:

ԽՄԲ.

Խրիմեան Հայրիկի մահուանից յետոյ՝ ազգի միահամուռ ցանկութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ Մատթէոս Արքեպս. Իզմիրլեան, որը Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնից կոչուեցաւ Ս. Էջմիածին՝ ազգի ընդհանրական Հայրապետի ծանր եւ պատասխանատու պաշտօնը վարելու:

Ռուսաց Ցարի կողմանէ նրա ընտրութիւնը վաւերացուեցաւ 1909 թ. Յունիսին ու, ըստ ընկալեալ սովորութեան, Ս. Էջմիածնի Սինոտի կարգադրութեամբ հրաւիրակներ գնացին Պոլիս՝ նորընտիր Հայրապետին դէպի Էջմիածին ուղեկցելու համար:

Նիկօլա Բ. Ցարը ցանկացել էր, որ Իզմիրլեան Կաթողիկոսը Նախքան Էջմիածին գնալը եւ Ս. Օծումն ընդունիլը, Պոլսից ուղղակի Ս. Պետրոսբուրգ գնայ՝ իրեն ներկայանալու համար: Սա մի նոր երեւոյթ էր, եթէ չհաշուենք Ներսէս Աշտարակեցու, իբրեւ ընտրեալ Կաթողիկոս, առանց տակաւին Կաթողիկոսական օծումն ստանալու, Պետրոսբուրգ գնալը եւ Նիկօլա Ա. կայսեր ներկայանալը (1843): Ներսէս այն ատեն Ն. Նախիջեւանի եւ Բասարաբիոյ թեմի առաջնորդն էր եւ կը գտնուէր Քիշնեւ քաղաքում, ուր էր թեմական ատեանը (Կոնսիստորիա): Այդ թեմի մէջն էին մտնում երկու մայրաքաղաքները՝ Պետրոսբուրգն ու Մոսկուան: Այնպէս որ, առանձին զարմանալու քան չկար: Տարօրինակ էր Իզմիրլեանի Պետրոսբուրգ կանչուիլը: Իզմիրլեան Պոլսէն շոգենաւով անցաւ ուղղակի Օտեսա եւ այստեղից էլ Պետրոսբուրգ:

Ասում են որ կայսեր կողմից մասնաւոր ներշնչումն է կատարուել Կաթողիկոսին, որ սա իւր «հաւատացեալ հօտը» (հայ ժողովուրդը) խրատէ, սաստէ եւ յանդիմանէ, որ ինքզինքը հեռու պահէ քաղաքական շարժումներից: Այդ միջոցին ասպարէզը Հ. Յ. Դաշնակցութեանն էր, որը որպէս այդպիսին, զօրեղ կերպով ննթակայ էր ռուս կառավարութեան հալածանքին: Ամենայն օր նոր-նոր ձեռքակալութիւններ էին կատարում Կովկասում եւ Ռուսաստանի այլ եւ այլ քաղաքներում: Դատական քննիչ Լըժինը ահ ու սարսափ էր տարածել Ռուսաստանի հայութեան վրայ:

Իզմիրլեան Կաթողիկոսը իւր ամենահպատակ զգացումները արտայայտելով Ցարին՝ Մոսկուայի եւ Նոր-Նախիջեւանի ու Արմաւիրի վրայով՝ Յուլիս ամսին ժամանեց Թիֆլիզ, ուր փոխարքայ Կոմս Վօրօնցով-Դաշկովի հետ տեսակցելէ յետոյ, ուղղակի անցաւ Էջմիածին, ուր նա ժամանեց Յուլիսի վերջերին՝ Արարատեան աշխարհի ամենատօթ օրերին:

Պետրոսբուրգից մինչեւ Թիֆլիզ, ուր որ Իզմիրլեան Կաթողիկոսը առիթ ունեցաւ հայ ժողովուրդի զանազան խաւերի հետ շփուելու, մի խօսք էր միայն ասում եւ շեշտում էր ու անվերջ կրկնում. նա յանձնարարում էր իւր հոգեւոր հօտին յարգել «օ-

բէնքը» եւ աղօթել ռուսաց կայսերութեան ապահովութեան եւ յարատեւութեան համար: Նորընտիր կաթողիկոսի այս միալար եւ տաղտկալի յանձնարարութիւնը պաղ տպաւորութիւն էր թողնում ամենքի վրայ ամենուրեք: Ամէնքն էլ հասկանում էին, որ Հայրապետը իւր ստացած որոշ հրահանգի համաձայն էր խօսում: Իւր եւ ժողովրդի մէջ՝ փոխանակ փոխադարձ ջերմ յարաբերութեան, մէկ ինչ որ պաղութիւն էր ստեղծում: Ու մի քանի տեղերում, կաթողիկոսը յայտարարում էր, որ ինքը կը հրաժարի կաթողիկոսութիւնից, եթէ ինքզինքը շփուարին պայմաններէ մէջ տեսնէ: Խօսքեր եւ արտայայտութիւններ որոնք սառը ջուր էին թափում Կովկասի հայութեան գլխին: Ի նկատի առնելով Արարատեան դաշտի չափազանց տաք եւ տօթ օրերը, Իզմիրլեանը, Սինօտի հետ խորհրդակցելով, որոշեց կաթողիկոսական Ս. Օծումն ընդունիլ Խաչվերացի տօնին (Սեպտեմբեր), որի մասին պաշտօնապէս յայտարարուեցաւ ի զիտութիւն ի սփիւռս աշխարհի ցրուած հայութեան: Եւ միւս կողմից էլ՝ նկատելով որ երկար ճանապարհորդութիւնից յետոյ յոգնած էր եւ կարիք ունէր հանգստութեան, բարեհաճեցաւ գնալ Բիւրական՝ Հայրապետական ամառանոցը: Այստեղ նա մնաց մինչեւ Օգոստոսի կէսերը: Ես, որպէս հսկիչ Հայրապետական ամառանոցի, շարթական երեք անգամ, գնում էի այնտեղ, այսինքն Դշ. եւ Եշ. օրերը, երբ սինօտը նիստ չէր ունենում: Կաթողիկոսի հետն էին Մեսրոպ Վրդ. Նշանեանը եւ Գրիգոր Վրդ. Պալաքեանը: Վերջինս օծումից յետոյ վերադարձաւ Պօլիս, իսկ առաջինը մնաց Կաթողիկոսի մօտ, իրբեւ գաղտնի խորհրդական, մինչեւ Կաթողիկոսի մահը: Իզմիրլեան զբաղած էր իւր անդրանիկ կոնդակի խմբագրութեամբ: Առ հասարակ ինքզինքը լաւ չէր զգում. տխուր էր եւ մտածկոտ: Կարծես ամիսսում էր, որ Պօլսից էջմիածին է եկել: Վարում էր առանձնացած կեանք: Շատ քիչ էր իւր սենեակից դուրս գալիս: Սաստիկ ծխում էր եւ մեծ քանակութեամբ սուրճ խմում:

Աստուածածնի պասի շաբթին, Իզմիրլեան ծանր կերպով հիւանդացաւ: Տառապում էր միզարգելութիւնից: Էջմիածնից բժիշկ Կարապետ Տէր Խաչատրեանը կանչուեցաւ: Բժշկի գալուց յետոյ՝ յայտնի եղաւ, որ Իզմիրլեանը իրբեւ կաթուածանման հարուած էր ստացել ծախ կողմից, որը շուտով անցաւ:

Բժիշկ Տէր Խաչատրեանը մտերիմ խօսակցութեան ժամանակ ասաց ինձ.

— Զարմանում եմ, որ այդ մարդը (Իզմիրլեան) յանձն է 'առել կաթողիկոս դառնալ: Ես նրան քննեցի: Լսեցի սիրտը, թոքերը, չափեցի արեան ճնշումը («թանսփօն») եւ այլն: Պէտք է ասեմ, որ նրա բանը փթրուկ ա (բժիշկը սովորաբար խօսում էր գաւառաբարբառով): Չեմ կարծում, որ նա երկար ապրի: Իմ կարծիքովս, շարունակեց բժիշկը, մէկին կաթողիկոս ընտրելուց առաջ, պէտք է բժշկական քննութեան ենթարկել: Պէտք է առողջ մարդ ընտրել կաթողիկոս եւ ոչ թէ հիւանդ՝ քայքայուած առողջութեան տէր մէկին, ինչպէս որ սա է (ակնարկելով Իզմիրլեանին): Կաթողիկոսը էջմիածին վերադարձաւ Աստուածածնի երկուշաբթին՝ մեռելոցի օրը:

Առաջին հերթական հարցը Հոգեւոր ձեմարանի տեսչութեան հարցն էր, զոր պէտք է կարգաւորէր նորընտիր Հայրապետը: Տեսուչ Մինաս Բերբերեանի քննիչ Լրժենի կարգադրութեամբ բանտարկուելուց յետոյ՝ տեսչի հարցը առկախ էր մնացել: Բերբերեան Օգոստոսի սկզբին, քննիչին 10,000 ռուբլի գրաւական ներկայացնելով, բանտէն ազատ էր արձակուել: Նրա առաջին գործը նորընտիր Հայրապետին ներկայանալն եղաւ Բիւրականում:

Այստեղ տեսուչ Բերբերեանը մատուցեց Հայրապետին զրաւոր մի ընդարձակ զեկուցում ձեմարանի մասին: Թուում էր թէ՝ տեսչի ազատ արձակուելով՝ տեսչական հարց գոյութիւն չայլեւս չալիտի ունենար, մանաւանդ որ Բերբերեան օրինակելի տեսուչ էր: Սակայն մութ մարդիկ, հոգեւորական եւ աշխարհական, յաջողել էին արդէն նախկին երկաթէ պատրիարքին յօգուտ իրենց շահերին ծռել. կաթողիկոսը յայտնեց Բեր-

բերեանին, որ ազատ է ճեմարանի տեսչի պաշտօնից, որ շատ ծանր տպաւորութիւն թողեց մեզ վրայ: Այդ առթիւ ես երկար խօսակցութիւն ունեցայ Կաթողիկոսի հետ, որից երեւաց, որ նա Բերբերեանին արծակում է, հակառակ իր (Կաթողիկոսի) կամքին: Եւ ով զարմանք, գրական-մանկավարժական եւ գիտական բազմակողմանի պատրաստութիւն ունեցող Մ. Բերբերեանից յետոյ, Կաթողիկոսը ճեմարանի տեսչի պաշտօնակատար նշանակեց ոմն Մ. Ռոստոմեանի, մի մարդ, որ ճեմարանի տեսչին վայել կըրթական եւ գիտական պատրաստութիւն բացարձակապէս չունէր: Մասնագիտութեամբ՝ մատենադաս էր: Դպրոցի երես չտեսած մէկը: Մտաւայել էր Բագուի նաւթարդիւնաբերողների մօտ: Մինչեւ վերջն էլ չհասկացուեց, թէ Ռոստոմեան իւր ո՞ր արժանիքի համար հայկական բարձրագոյն դպրոցը ղեկավարելու կոչուեցաւ Կաթողիկոսի կողմից: Մի տարուան խայտառակ տեսչութիւնից յետոյ՝ Ռոստոմեան հրաժարուեց: Նրա տեսչութիւնը մի արատ, մի սեւ բիծ թողեց իւր ետեւից: Այնուհետեւ, երկար ժամանակ, այսպէս ասած, ճեմարանի խնդրը գլուխը չէր գալիս մինչեւ Գարեգին Վրդ. Յովսէփեանի տեսչութիւնը, որը Բերբերեանից յետոյ՝ արժանապէս վարեց այդ պաշտօնը:

Մինչ այս, մինչ այն՝ Սեպտեմբերը վրայ հասաւ: Օծման օրը մօտենում էր: Պարբերական մամուլից իմանում էինք, որ այս ու այն հայկական կենտրոնից պատրաստուում էին ընտրելու պատգամաւորները Էջմիածին գալ՝ հայրապետի օծման հանդէսին ներկայ լինելու:

Մի օր սինտումն էի: Նիստի օր էր: Ներկայ էին բոլոր անդամները: Ատենապետը զեկուցումն էր անում:

Ներսէ մտնում հերթապահ պաշտօնեան եւ յայտնում, թէ Վեհափառ Հայրապետը վեհարան է կանչում Մեսրոպ վարդապետին (այժմ արքեպս., առաջնորդ Հարաւ - Հնդկաստանի թեմի) եւ Յուսիկ վարդապետին (ինձ):

Ինձ տարօրինակ երեւցաւ Հայրապետի այդ հրաւերը: Նոյնը կարծում եմ եւ Մեսրոպ վարդապետին: Մենք տարբեր հոսանքի կը պատկանէինք. այս էր պատճառը, որ ինձ տարօրինակ թուեցաւ մեր երկուքի միասին վեհարան կանչուիլը:

Լսելով մեզ եղած հրաւերը, անմիջապէս գնացինք վեհարան՝ ներկայանալու Վեհափառ Հայրապետին. մեզ ընդունեց սովորական ընդունելութեան դահլիճում: Մտնելով ներս, ըստ ընկալեալ սովորութեան, վեղարնիս վերցրած՝ մօտեցանք ի համբոյր աջոյն: Հայրապետը օրհնելով մեզ՝ հրաւիրեց նստել բազմոցի վրայ: Մենք երկուքս կողք կողքի նստանք:

Հայրապետը իր գրասեղանի գլորոցը քաշելով, այնտեղից մի թուղթ հանեց եւ դառնալով ինձ, ասաց —

— Յուսիկ վարդապետ, առէք այս թուղթը եւ մտքով՝ Ձեզ համար միայն կարդացէք: Այդպէս էլ արի:

Ու երբ թղթի ընթերցումը վերջացրի, ասաց —

— Հիմա տուէք Մեսրոպ վարդապետին:

Եւ դառնալով դէպի նրան, ասաց —

— Մեսրոպ վարդապետ, դուք էլ կարդացէք այնպէս, ինչպէս Յուսիկ վարդապետը, մտքով՝ Ձեզ համար միայն:

Նա էլ կարդաց:

Ասեմ անմիջապէս, որ կարդացածս թուղթը Իգմիրլեան Կաթողիկոսի ինքնակենսագիր հրաժարականն էր, ուղղած ողորմած Յար Նիկօլա Բ.ին: Գտնուելով ծանր պարագաներու մէջ, գրում էր Իգմիրլեան Կաթողիկոսը, որոնք անհնարին կը դարձնեն իմ Կաթողիկոսութիւնը, ամենախոնարհաբար կը խնդրեմ Ձերդ կայսերական Մեծութենէն ամենաողորմածաբար հաճեցէք ընդունիլ հրաժարականս եւ Կաթողիկոսական նոր ընտրութիւն նշանակել:

Հայրապետը, թուղթը առնելով Մեսրոպ վարդապետից, դարձաւ դէպի ինձ եւ ասաց.

— Յուսիկ վարդապետ, առանց կաշկանդումի՝ ազատօրէն յայտնեցէք Ձեր կարծիքը: Վեղարս վերցնելով յոտնկայս ես ասացի հետեւեալը.

Վեհափառ Տէր,

Յուզուած սրտով կարդացի Ձեր հրաժարականը: Դուք որոշել էք հրաժարուել կաթողիկոսութիւնից: Ազգը չ'ընտրեց Ձեզ նրա համար, որ էջմիածին հասնելով՝ հրաժարուիք: Ազգը Ձեզանից ակնկալիքներ ունի: Վաղը միւս օրը դուք պիտի օծուիք: Պատգամաւորներն արդէն սկսել են գալ էջմիածին: Ձեր այդ քայլը մեծ յուսախաբու-թիւն եւ բարոյալքում առաջ կը բերի ազգի մէջ: Դուք ոչ մի իրաւունք չունիք հրաժարուելու: Ազգը երբեք չի ներել Ձեզ, եթէ հրաժարուիք: Դիտէք, որ կաթողիկոսու-թիւնը ցմահ է: Կրկնում եմ, բարոյական ոչ մի իրաւունք չունիք հրաժարուելու: Եթէ եփրեմ կաթողիկոսը հրաժարուեց, որովհետեւ զառամած էր եւ մշտապէս հիւանդ: Դուք ոչ հիւանդ էք եւ ոչ էլ զառամեալ: Ընդունեցէք կաթողիկոսական Ս. Օծումը եւ ապաւինելով Աստուածային օգնականութեանը՝ սկսեցէք փառաւորապէս վարել Ձեր բարձր պաշտօնը, որպէս հովուապետ հայ բազմատանջ, նահատակ ազգի եւ եկեղեցու: Մենք ուխտել ենք, զոր կը կրկնենք եւ այժմ, Հայրապետական աթոռի դրօշը բարձր պահել, մաքառիլ ամէն տեսակ դժուարութեանց դէմ եւ ամէն խնդրում օգնել Ձեզ թէ գործով եւ թէ խորհրդով:

Ապա ուզեց Մեսրոպ վարդապետի կարծիքը լսել:

Այն ինչ որ Յուսիկ վարդապետը ասաց, համարում եմ ուղիղ, իմ կարծիքս էլ նոյնն է, ասաց Մեսրոպ վարդապետը, ինչ որ Յուսիկ վարդապետինը: Նրա ասածի վրայ ոչինչ չունիմ աւելացնելու:

Կաթողիկոսը, տեսնելով որ մենք տարբեր հոսանքների ներկայացուցիչներս ասում եւ պնդում ենք միեւնոյնը, թուղթը (հրաժարականը) դրեց իւր գրասեղանի գրգ-րոցը եւ դառնալով մեզ, ասաց.

«Մօտ երկու ամիս է, որ ես այստեղ եմ: Իմ դիտողութիւններս եւ լսածներս դժբախտաբար, զիս բերին այն համոզման, որ շատ պիտի նեղուիմ ու չպիտի կարողա-նամ լիովին պարտքս կատարել առ ազգն ու եկեղեցին: Կը գտնուիմ ծանրածանր պա-րագաներու մէջ, որոնք անհնարին կը դարձնեն իմ կաթողիկոսութիւնը: Վասն որոյ որոշեցի հրաժարուիլ կաթողիկոսութիւնից ու հրաժարականս պատրաստեցի, զոր դուք կարդացիք: Շատ շնորհակալ եմ ձեզինքն որ դուք կը խոստանաք ձեր գործով եւ խոր-հրդով ինձ նեցուկ հանդիսանալ: Կը հաւատամ ձեր անկեղծութեան եւ կ'ընդունիմ, որ հրաժարումս ամենայնի պիտի օժանդակէ ինձ: Վասն որոյ կը խոստանամ ձեզ չհրաժա-րիլ, այլ ապաւինելով յԱստուած՝ գործի անցնիլ յետ օծմանս: Ազնիւ խօսք պիտի տաք ինձ, որ այս հարցը (հրաժարականի) մեր մէջ պէտք է մնայ, միայն մենք երբեք զիտ-ցած ըլլանք եւ ուրիշ ոչ ոք:»

Խոստացանք գաղտնի պահել:

Ես մինչեւ կաթողիկոսի մահը տուածս խօսքը պահեցի սրբութեամբ, անգամ իմ ամենամօտ ընկերներիս ոչինչ չ'ասացի: Իսկ Մեսրոպ վարդապետը, ինչպէս յետոյ յայտնի եղաւ, պատմած է եղել ուրիշներին: Սակայն այս մասին իւր տեղում:

Կաթողիկոսի օրհնութիւնը առնելով, մեկնեցանք վեհարանից:

Դնացինք սինօտ՝ նիստին մասնակցելու:

Սինօտի անդամները շատ հետաքրքրուեցան իմանալու, թէ ինչու կաթողիկոսը մեզ կանչել էր:

— Կանչել էր դպրոցական հարցի առթիւ խորհրդակցութեան, եղաւ մեր պա-տասխանը, ինչպէս որ ես ու Մեսրոպ վարդապետը պայմանաւորուել էինք ճանապար-հին՝ վեհարանից սինօտ գնալիս:

Իզմիրլեան կաթողիկոսական օծումն ընդունեց 1909 թ. Սեպտեմբերին՝ Խաչվերացի կիրակին, ի ներկայութեան յոգնախուռն բազմութեան:

Օծման հետեւեալ օրն իսկ՝ Հայրապետը անցաւ գործի:

Ամէնից առաջ ձեռնարկեց կաթողիկոսարանի դիւանի խորհրդի կազմութեան:

Մինչ Իզմիրլեան, նախորդ կաթողիկոսները իրենք էին իրենց դիւանի դիւանապետ կարգում կոնդակով, որին եւ կամենային միաբաններէ, սովորաբար վարդապետներէ:

Իզմիրլեան կամեցաւ, որ Դիւանապետն ու Դիւանի խորհուրդը ընտրովի ըլլայ: Հրամայեց միաբանական ժողով գումարել, առաջադրելով, որ ժողովը ընտրէ չորս հոգի, որոնցից մէկը իր՝ կաթողիկոսի ընտրութեամբ պիտի լինէր Դիւանապետ եւ Դիւանի խորհրդի նախագահ, իսկ երեքը՝ անդամներ: Օծման առթիւ, Էջմիածինի համարեա ընդհանրապէս միաբանները, այլ եւ նրանք որոնք թեմերում պաշտօն էին վարում, Մայր Աթոռում էին: Կաթողիկոսի հրամանով գումարուեցաւ ընդհանուր միաբանական ժողով, որը գաղտնի բուհարկութեամբ ընտրեց Գարեգին Վրդ. Յովսէփեանին, Մովսէս Վրդ. Տէր Մովսէսեանին, Խորէն Վրդ. Մուրատէկեանին եւ ինձ, եւ ներկայացրեց Վեհափառ Կաթողիկոսի բարեհայեցողութեան:

Կաթողիկոսը այդ չորսից ինձ նշանակեց Դիւանապետ: Ես դիւանապետի պաշտօն վարել էի նաեւ Խրիմեան Հայրիկի օրով:

Իմ Դիւանապետ կարգուելու դէմ որոշ միաբաններ, գլխաւորութեամբ Գէորգ Արքեպս. Սուրէնեանի եւ Մեսրոպ Վրդ. Տէր Մովսէսեանի, բողոքեցին կաթողիկոսին, առարկելով, որ ես «պետութեան աչքում անվստահելի որ եմ», իբր թէ՝ որպէս դաշնակցական, իբրեւ այդպիսին տակ եմ գտնուում. ուրեմն եւ անհամապատասխան եւ անյարմար մէկն եմ դիւանապետի պաշտօնի համար: Բողոքարկունները ասում էին նաեւ այն, որ ես Սինօտի անդամ լինելով, Սինօտի օրագրները կաթողիկոսին զեկուցանելիս ստորագրելու համար, կրնային քմահաճ կերպով բացատրել օրագրների բովանդակութիւնը: Իզմիրլեան, լսելով իմ դէմ եղած բողոքը, տատանուեց եւ հրաւիրելով մեզ չորսին, յայտնեց, որ իմ դէմ վերոյիշեալ հիմունքներով բողոք կայ: Մեսրոպ վարդապետը, ըստ իր քնածին սովորութեան մէջ ընկնելով, ասաց որ, ինքը անյարմար է գտնում իմ Դիւանապետ նշանակուիլը եւ առաջարկեց Վեհափառին, որ Խորէն Վրդ. Մուրատէկեանին նշանակէ: Գարեգին վարդապետն էլ իմ թեկնածութիւնը պաշտպանեց: Պարզ էր, որ վանական երկու հոսանքներն պայքար էին մղում իրար դէմ: Կաթողիկոսը յանձնարարեց մեզ, որ չորսս խորհրդակցինք այդ առթիւ եւ խորհրդակցութեան արդիւնքը յայտնենք իրեն ի տնօրէնութիւն: Այս լսելով, ես յայտնեցի կաթողիկոսին որ այդ խորհրդակցութեան ես չեմ մասնակցիլ, խորապէս համոզուած լինելով, որ այդ խորհրդակցութիւնը ոչ այլ ինչ է լինելու, բայց եթէ տարածայնութիւն երկու հոսանքների մէջ: Շնորհակալութիւն յայտնելով կաթողիկոսին՝ իրեն ինձ տրուած պատուի համար, հրաժարուեցի Դիւանապետի պաշտօնից: Ու այդպէս, առանց որոշ եզրակացութեան գալու, կաթողիկոսի մօտից դուրս եկանք: Խնդիրը վերջնականապէս կարգադրուեցաւ Ամերիկայից եկած պատգամաւորների միջամտութեամբ:

Հետեւեալ օրը առաւօտեան Հայրապետը հրաւիրելով ինձ վեհարան, վճռողաբար յայտնեց, որ ինքը ինձ է նշանակում Դիւանապետ եւ պատուիրեց որ Դիւանի խորհրդի նիստ գումարեմ՝ ստացուած թղթերի ընթացք տալու համար:

Դիւանական խորհրդի անդրանիկ նիստը գումարուեցաւ Դշ. երեկոյեան իմ նախագահութեան տակ: Պէտք է ասեմ, որ, առ հասարակ, մեր նիստերը շատ բուռն էին լինում, երբեմն այն իսկ կրքոտութեան աստիճանի հասած: Այս երեւոյթի պատճառը Մեսրոպ վարդապետն էր, որը, չգիտեմ իւր որ առաւելութեան կամ արժանիքի համար, ուզում էր գերակշռող դեր կատարել եւ որը երբեք իրեն չյաջողուեց այն հասարակ պատճառով, որ միւսները աւելի խելօք էին քան ինքը:

ՅՈՒՍԻՒՎ ՎՐԴ. ԶՕՀՐԱՊԵԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ ՎԱՆՔ ՍԵՔԱՍՏԻՈՅ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Սուրբ Հրեշտակապետի վանքը կը գտնուէր Սեբաստիա քաղաքէն հինգ ժամ հեռու բարձր լեռնակի մը վրայ, ուրկէ կարելի էր դիտել շրջակայքի գեղեցիկ տեսարանները: Ունէր փոքրիկ բայց սիրուն տաճար մը:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Սեբաստիոյ մէջ 1155 թուին նահատակուած Գոհարինեան վկաներուն նշխարները՝ 1187 թուին Բարսեղ վարդապետի ձեռքով ամփոփուած են վանքի տաճարին մէջ, անկողմեան պատին տակ. — Գ. Վ. Սրուանձտեան, Թորոս Աղբար, 1879, Ա. Հատոր, էջ 182:

Սոյն վանքի առաջնորդներէն կը յիշենք հետևեալները:

1. — Մելիսեք Եպս. Սեբասացի, 1619–1626:

2. — Նիկողոս Եպիսկոպոս, 1626–1636:

3. — Պետրոս կրօնաւոր, 1651:

4. — Եղիազար Վրդ. Սեբասացի, 1729–1747:

5. — Ասուածասուր վարդապետ, 1747–1759:

6. — Յովհաննէս Վրդ. Սեբասացի, 1760–1778:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Սուրբ Հրեշտակապետի վանքին մէջ օրինակուած ձեռագիրներէն ծանօթ են հետևեալները: Կը ներկայացնենք Գրիշներու ժամանակադրական կարգին համաձայն:

Ա. — Ալէքսիանոս Դպիր, 1599 ին օ-

րինակած է Մեկնութիւն ժ.Ք. Մարգարէից Ն. Լամբրոսնացւոյ, Ազարիա Կաթողիկոսի աշակերտ՝ Կիւլիկեցի Յովհաննէս վարդապետի համար. — Macier, Notices, p. 29:

Բ. — Նիկողայոս Արեղայ, Գրիչ, 1619 ին օրինակած է Աւետարան մը, որուն ստացողներն են Արեշտէ և իր կինը Թաթամ: Կազմող՝ վարպետ Պաղտատար. — Ձեռ. Սեբաստիոյ, թ. 47:

Գ. — Խաչատուր Արեղայ, Գրիչ, 1620 ին օրինակած է ժողովածոյ մը. — Ձեռ. Երեւանի, թ. 5631:

Դ. — Յարութիւն Դպիր, 1643 ին օրինակած է մէկ Շարակնոց, Խոջայ Քրիստոստուրի պատուէրով. — Ձեռ. Երեւանի, թ. 7622:

Ե. — Պետրոս Սրկ. Արղ. Գրիչ, որդի վրդանէսի և Կուլիստանի, աշակերտ Մարգուանցի տէր Անանիայի, օրինակած է,

1. — Աւետարան, 1651 ին, Յովհանի որդի Եաղուպի համար: Ծաղկող և կազմող՝ Շամլու. — Ձեռ. Սեբաստիոյ, թ. 50:

2. — Մաեսոց, 1659 ին, Մարգուանցի Նորհատի փափաքով. — Ձեռ. Սեբաստիոյ, թ. 106:

Ձ. — Նորտունկ վրդ. Հռոմկլայեցի, Գրիչ, օրինակած է 1659 ին մէկ Մեկնութիւն Մասթեոսի Ն. Շնորհաւոյ. — Ձեռ. Երեւանի, թ. 4032:

Ի. — Գրիգոր Արեղայ, Գրիչ, 1779 ին օրինակած է մէկ Քարոզիւի Երեւանցի Սիմէոն վարդապետի. — Ձեռ. Երեւանի, թ. 5898:

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

«ՍԻՈՆ» Ի ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տեղւոյս ազգայիններէն Պր. Ս. Սահակեան մեզի ուղղած է հետեւեալ զոյգ հարցումները. —

Ի՞նչ է բուն իմաստը ակիւլիա բառին:

Ակիւլիա բառը իրեն իբր արմատ ունի երբայրէն լեզուի հալլել բառը, որ օրհնաբանութիւն կամ փառաբանութիւն կը թարգմանուի հայերէնով: Հինէն անցած է Նոր Ուխտին և կը գործածուի գրեթէ բոլոր Գրիստոնէական եկեղեցիներու ժամասացութեան մէջ: Կ'արժէ յիշել որ Լատին եկեղեցին Մեծ Պահոց ընթացքին կը դադարեցնէ գործածութիւնը յիշեալ բառին, գուցէ խորթ համարելով հոգեւոր գոհունակութեան մը դրսևորումը եղող այդ արտայայտութեան տեղ տալ ապաշուի ու զղջումի շնչաւորով արտաբերուած աղօթքներուն մէջ:

Ինչո՞ւ Յունադաւաններ (Օրթոտոքս) խաչակնքումի ատեն իրենց ձեռքը նախ աջ և ապա ձախ ուսին կը տանին:

Օրթոտոքս եկեղեցին խաչակնքումի այդ ձեւը կը պաշտպանէ երեք տուեալներու վրայ հիմնուելով. —

ա) Բոլոր ժողովուրդներու մօտ և բոլոր ժամանակներու մէջ, աջը նախապատիւ համարուած է ձախէն: Ատոր կը վկայեն յաջողութիւն և ձախողութիւն բառերը, որոնք իրենց համարժէք բառերը ունին նաև Յունարէնի մէջ:

բ) Գրիստոսի աջ կողմը խաչուած աւազակն էր որ արժանացաւ թողութեան և արքայութեան, մինչ ձախակողմեանը դատապարտուեցաւ գնահին հոսին:

գ) Յունարէնի ինչպէս նաև շատ մը ուրիշ լեզուներու պարագային, խաչակնքումի բանաձևին մէջ (յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ) Սուրբ բառը կը կանխէ լոզին (Յունարէն՝ Այու ֆնէդ-մաթօս — Άγιος Πνεύματος): Եւ, արուած ըլլալով որ մարդ արարածի հօգին — սիրտը — կը բարբախէ իր ձախ կուրծքին տակ, Օրթոտոքսներէն որդեգրուած խաչակնքումի ձևն է միայն որ հնարաւորութիւն կու տայ իրենց հոգի բառը ար-

ՆԿԱՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐ

«Սիւնի երեմիի աշխատակից, Նոր-Ձաւայեցի բանասէր Լ. Փ. Մինասեան, փարիզի մեռալ՝ օրաթերթի տարւոյս Յուն. 19-20-ի միացեալ թիւին մէջ, «Վարդանանց տունը 1980-ին կատարուելու է երկուշաբթի օրը խորագրով գրութեամբ մը տուած է բացատրական տեղեկութիւններ այդ հարցի մասին: Տրուած բացատրութիւնները ճիշդ են ըստ ամենայնի: Բայց այդ առթիւ եղած արտայայտութիւններուն մէջ հանդիպեցանք երեք թերի կամ սխալ տեղեկութիւններու, զորս պարտք կը համարենք ուղղել:

1) Տօնին համար Մինասեան կ'ըսէ որ «անխախտ ձևով միշտ տեղի էր ունենում Բարեկենդանի երկրորդ շաբաթուայ Հինգշաբթի օրը»: Արդ, «Բարեկենդանի երկրորդ շաբաթուայ» անորոշ բացատրութիւնը կրնայ Հայց. եկեղեցւոյ տօնացոյցին անտեղեակ անձի մը կողմէ մեկնաբանուիլ իբրեւ Մեծ Պահոց երկրորդ Հինգշաբթին: (Գիտցողը արդէն կը կռահէ սխալը անմիջապէս): Մինչդեռ իրողութիւնը այն է որ Վարդանանք կը տօնուին Բուն Բաւեկեղանի կանխող եւ. օրը:

2) Ս. Ձատկի տօնին համար ըսած է թէ կը տօնուի «գարնան տօնից յետոյ եկող լուսնի լրումէն ետք»: Գարնան օրն բացատրութիւնը սխալ է: Եթէ Պարսկաստանի մէջ Նէվրուզ կամ Նոր Տարի է գարնանամուտը, այդ մեղ իրաւունք չի տար եղանակի մը անունով տարուան մէջ որոշ օր մը տօն կոչելու: Պէտք է ըսուէր պարզապէս գարնանամուտէն ետք եկող ...:

3) Մինասեան կ'ըսէ. «եկեղեցական տօները սովորաբար բաժանուած են երեք կարգի, որոնք են՝ Տէրունական տօներ, եկեղեցական սուրբերի տօներ և աղագային-մշակութային տօներ»: Ոչ թէ եկեղեցական տօները, այլ տարւոյն օրերը մեր եկեղեցւոյ մօտ բաժանուած են երեք կարգի — Տէրունի տօներ, որոնք տօներ (մէջն ըլլալով «աղագային-մշակութային» տօները) — Թարգմանչաց, Վարդանանց — որոնք ևս սուրբերու յիշատակը կ'ազդեցնեն) և պահոց օրեր:

Կ'ընենք այս նկատողութիւնները իբրեւ լուսաբանութիւն մեր եկեղեցւոյ տօնակարգով հետաքրքրուող հաւատացեալներուն:

Գ.

տասանած պահուն ձեռքը մօտ բերել իրենց ձախ կուրծքին:

Յոյներ տակաւին կը պնդեն թէ բոլոր քրիստոնեաներ նախապէս կը հետեւէին խաչակնքումի իրենց այժմու ձևին: Այս նշմարութիւնը զուրկ է սակայն զայն հիմնուած որդ ապացոյցներէ:

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԸՌԱՋ

ԴՈՒՐԵԱՆ ԹՈՒՆԵԱՆ

Դուրեան Թորեկեանի Ամերիկայի Յաննա ժողովին Գործադիր Մարմնի կողմէն Դ. Յ. Կ. Յաննա ժողովին ուղղուած փետր. 7 թուականի նամակէն և յարակից հաշուեկշիռէն գտնուեցան Կիւմանանք թէ Ամերիկայի մէջ ի նպաստ Դուրեան Մասնադարանի կատարուած ժողովրդական հանգանակութեան զուտ արգիւնքը յանգած է **6572** Տոլար և **23** Սենթի: Այս գումարի մէջն է նաև Պուէնտս Ալթէսի հայ գաղութին նուէրը՝ **664** Տոլար, **18** Սենթի: Հարիւր Տոլարի մօտ դանձելի գումար մը մնացած է, որով վերոյիշեալ գումարը պիտի ըլլայ, կ'որ թիւերով, 6670 Տոլար, հաւասար 1334 Անգլիական Ոսկի, զոր աւելցնելով միւս հանգանակութեանց գումարին վրայ, 2183 + 1334, կ'ուենանք **3517** Ոսկի իբրև հիմնադրամ, որուն տարեկան տոկոսով է որ պիտի հրատարակուին կարևոր գիրքեր, Դուրեան Մասնադարան տնտեսութիւն տակ:

ՏՕՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՅ

Ժառանգաւորաց Վարժարանը եօթնեակ մը արձակուրդ կ'ուեննայ Բուն Բարեկենդանէն յառաջ, եկեղեցական հանդիսաւորութեանց առթիւ, որոնց կեդրոնն է Վարդանանց տօնը, որ այս տարի կատարուեցաւ Բշ. օր (փետր. 24) փոխանակելու (փետր. 27), տեղի տալով Տեառնընդառաջին, որ հաստատուն կերպով կը տօնուի փետր. 14ին հին կամ նոր տոմարով, շարժուն օր օրն ալ հանդիպի:

Նախատօնակին հանդիսագիրն էր Ս. Պատրիարք Հայրը, որ, Ս. Յակոբի յատուկ աւանդութեամբ, ատենն նշխու առնէ իր ձեռքը առաւ Հեթում թագաւորի վերագրուած գաւառներ:

Մեր եկեղեցւոյ կրօնական և միանգամայն ազգային մեծ տօնին տրուած այս հանդիսաւորութիւնը կարեւորութիւն ունի մանաւանդ երեսնադէմի մէջ, ուր հայ ազգը անյիշատակ ժամանակներէ ի վեր տէր եղած է առանձին և միջեկեղեցական իրաւունքներու, և Կիւիկեան թագաւորութեան շրջանին մանաւանդ, շնորհիւ հայ թագաւորներու թաշակիրներու հետ ունեցած բարեկամութեան, աւելի ևս չեղուած և ընդարձակուած են Հայոց սեպհական և միջեկեղեցական իրաւունքները: Եւ չէթումի գաւառացին, ինչ ալ եղած ըլլայ ատոր նշանակութիւնը, յուշարձան մըն է պատմական փառաւոր ժամանակներու մէջ կատարուած իրողութեանց, որոնք շաղկապուելով Վարդանանց տօնի յիշատակներուն հետ, կ'ոգեւորեն մեղ, և իրաւունք կու տան հայ ժողովուրդին որ չմարէ իր մաքուր յոյ-

սերը ազագային համար, և տաք սրտով և պայծառ մտքով գնահատէ Մայրենի եկեղեցւոյն կրօնական և ազգային արժէքները:

Վարդանանց տօնին պատմութիւնը վերականգնանքնու համար դարձեալ մեր տղաք, փետր. 25, Դշ. գիշեր, Ժառնգ. Վարժարանի խաչածն սրահին մէջ ներկայացուցին Սմբատ Բիւրատի «Աւարայի Արծիւ»: Անցեալ տարի ներկայացուցած էին Մանավանին գրածը:

Այս տարի մեր տղաք աւելի կատարելագործած էին բեմին յարդարումը, իսկ զգեստները բոլորովին նոր կտրուած կարուած էին: Դերասաններու վարժանքին հսկած էր Մատթէոս Սարգաւադ. ամէնքն ալ, իրենց տարիքին և բերմունքին նայելով, յաջողապէս կատարեցին իրենց դերերը: Մասնաւոր յիշատակութեան արժանի է Ժառնգ. Վարժարանի ուսուցիչներէն Պր. Պերճ Տարաղճեանը (Սանտրուի), որ Յակոբի դերը կատարեց լաւ մըրձուցումով և գրեթէ անթերի արտայայտութեամբ: — Զաւելտի շատ զուարճալի և շատ յաջող տեսարան մը յաջորդեց տրամասացութեան, յիշեցնելու համար որ Բարեկենդանի շարժուն մէջ ենք:

Տ Ե Ա Ռ Ն Ը Ն Դ Ա Ռ Ա Ջ

Ինչպէս որ գիտել տուինք, այս տարի Տեառնընդառաջի տօնը գրաւեց Վարդանանց Հինգշաբթին:

Ազգային հին սովորութիւններ ընդհուգուած են այս տօնին հետ, և հանդիսաւոր մօմավառութիւնը եկեղեցւոյ մէջ ամէնէն ուշագրաւ հետքն է որ մնացած է այդ սովորութիւններէն: Մօմավառութեան նախնական ձևն է անշուշտ դուրը կատարուած ժողովրդական ըմբօղանքութիւնը, Հայոց հին հաւատքէն նշմար մը, որ երիտասարդներու համար զուարճութեան առիթ կ'ընծայէ այլևս:

Ս. Յակոբի մէջ, նախատօնակէն ուսնողատանէն յետոյ, եռստեղեան աշտանակ մը կը դրուի Ատենանի մէջ, զոր կը լուցեն Հանդիսագիր Սրբազանին հետ երկու առաջաւոր եպիսկոպոսներ, և յետոյ այդ մօմերէն կը լուսավառին եկեղեցական դասուն և ժողովրդեան մօմերը:

Բնաշխարհին մէջ, եկեղեցւոյ մէջ վառուած այդ մօմերը ժողովուրդը կը տանէր իր տունը՝ այդ երեկոյ ատով վառելու համար տան ճրագները: Որչա՛փ խորհրդաւոր սովորութիւն: Ինչ ալ եղած ըլլայ ռամկին ըմբռնումը այս մօմին, Հայու եկեղեցին և Հայու Տունը լո՛յս հաւատքով կապուած են իրարու: Աւետարանի լոյսէն հոգեւոր սնունդ կ'առնեն երկուքն ալ, և ատով կ'արտայայտեն կրօնքին լուսաւոր խորհուրդը իրենց կեանքին ու կենցաղին մէջ:

(«Սիոն», 1980, Դ. Ցարի, Մարտ, Թիւ 3, էջ 94-95:)

ՎԱԹԱՊՈՒՆՅՈՒՆԳԱՄԵԱԿ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ

Ինչպես ուրիշ տարիներ եւ բոլոր հայ գաղութներու (ինչպես նաեւ Մայր Հայրենիքի) մէջ, Սաղիմահայութիւնը այս տարի եւս իր յարգանքի տուրքը բերաւ Ապրիլեան զոհերու անբողոք յիշատակին:

Հինգշաբթի, 24 Ապրիլի առաւօտեան ժամը 9.30ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ: Ժամաւորն էր Հոգե. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան: Քարոզեց Գեորգ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիէան, վեր առնելով աւերակներէն ու մոխիրէն ետք վերապրելու եւ վերաշինելու հոգը ու անխորտակելի կամքը մեր ժողովուրդին: Յետոյ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, կազմուեցաւ մեծ քափօր, որ հանգստեան շարականներու երգեցողութեամբ եւ հետեւողութեամբ յոգնախուռն բազմութեան ուղղուեցաւ Ս. Փրկչի ազգային զերեզմանատունը: Թափօրին առջեւէն կը ֆալէին ֆաղափա բոլոր հայ ակումբներու (Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութիւն, Հայ Երիտասարդաց Միութիւն եւ Արաֆա՝ Հայ Կարողիկէ Միութիւն) արիւններն ու արեւոյշները՝ բազմաթիւ ծաղկեպսակներով եւ մեր դարու առաջին ցեղասպանութիւնը դատապարտող մեծատառ եւ բազմալեզու լուղւոցներով: Թափօրին մէջ յասկապէս կը նժմարուէին երեսուն երեք հայեր, ծաղկեպսակներ տանող: Ասոնք ցեղասպանութենէն վերապրած հայերն էին, Նուստադէմէն, Նոֆայէն եւ Հայֆայէն եկած: Փակ էին հայկական բոլոր խանութները եւ կիսածող կը ծածանէր դուռը Պատրիարքարանի հիւսիսային նակիին: Արարայի նակասամաւոսին զոհուած հայ կամաւորներու անիւներուն վրայ բարձրացող յուշարձանին շուրջ կատարուած հոգեհանգստեան հանգիստաւոր պատեամունքէն ետք խօսք տուաւ Նուստադէմայի Հայոց Բարեսիրական Միութեան վարչականներէն Տիար Կարապետ Յակոբեան, ողբելոցելով սրբազան յիշատակը մեծ գուպարին մէջ ինկող մեր բիւրուար զոհերուն:

Կեսօրը անցած էր երբ բոլորն ալ վե-

րադարձան Վանք, հոգեհանգստեան առնելու համար Հայ Երիտ. Միութեան սրահին մէջ:

Նոյն երեկոյ ժամը 8ին, Ալեքս եւ Մարի Մանուկեան ժառ. Վարժարանի ընդարձակ սրահին մէջ, ֆաղափա հինգ հայկական Մի. ութիւններուն նախաձեռնութեամբ կազմակերպուած էր Յուշահանդէս՝ ի յարգանք Ապրիլեան նահատակներուն: Ժամանակէն առաջ խուռն բազմութիւն մը լեցուցած էր ընդարձակ սրահը մինչեւ մուտքի դուռը:

Կազմակերպիչ Յանձնախումբը զովիկի մտածումը ունեցած էր յայտագրի գործադրութենէն առաջ սլաշտներու միջոցաւ հանդիսականներուն ներկայացնելու փառադիպատարներ՝ Մեծ Նշեմանի արհաւիրքներէն: Բեմին կեդրոնը դրուած էր ֆորսքսթը Մայր Հայաստանի՝ իր ազատագրուած փոքր եւ բռնագրաւուած մեծ մասերով, իսկ անկիւնը շինուած էր Տէր-Զօրի սպանդանոցը յիշեցնող զանկաբլուր մը՝ արեան հետեւը կրող խոշոր խաչի մը շուրջին ճակ եւ եզերուած երկվեցեակ մը լուցեալ մոմերով:

Յանձնախումբի Աստեղապետ Տիար Սարգիս Մելիսոսեանի բացման հակիրճ խօսքէն ետք բեմ բարձրացաւ Հ. Մ. Ը. Միութեան Բարեսիլ Կանաչեան երկսեռ երգչախումբը, որ ղեկավարութեամբ փորձառու խմբավար Տիար Համբարձում Գալայեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ իր կրօնքը ելքով՝ Տիար Վահէ Գալայեանի, կատարեց «Ոգեհի Նահատակաց»ը եւ «Մեծիկ Մօր» (Զարթիւր, լաօ) երգը: Ապա բեմ հրաւիրուեցաւ օրուան բանախօսը՝ Տիար Սահակ Գալայեան, որ պատմական ակնարկ մը նետելէ ետք Նշեմանին տունը պարագաներուն՝ հակադրեց ներկայ Հայաստանի պայծառ իրականութիւնը սահմանէն անդին գտնուող եւ զգիտութեան ու խաւարի նիւթներուն մէջ տուայտող մեր բեմամբ բռնագրաւուած հողերուն: Շեւեղ կարիքը զարգացած ու լեզուագէտ ազգայիններու, յառաջ տանելու համար Հայ Դաշի ի նպաստ տարուելիք աշխատանքները: Տիար Դաւիթ Սամուէլեան իր

աղու ձայնով մենեբրեց Կոմիսասի «Անհու-
նի»-ն, դաւեմակի ընկերակցութեամբ Տիար
Սարգիս Քամանեանի, որմէ ետք Տիար Պերն
Կենեֆուեան ապրումով արտասանեց Վա-
հան Քեֆեանի «Ահաւոր բան մը այնքան»-ը:
Ամսան Կոմիսասի «Գարուն ա»-ն իր շնոր-
հալի ձայնով մենեբրեց Տիկին Հռիփ Ադամ-
եան, ապա Տիար Կարո Հեփմեան կատարեց
ընթերցումը Սարգիս Զէյրեանի «Հայ Դաշի
Օր» խորագրուած գրութեան: Երգչախումբը
կատարեց զոյլ խմբերգներ՝ Ն. Ռուսինեանի
«Կլիկիկիա»-ն (մեակում Զարեհ Մ. Վրդ. Ազ-
նաւորեանի) եւ Յովն. Թումանեանի «Հայ-
րենիքիս հետ»-ը՝ եղանակաւորուած հայրե-
նաբնակ երգահան Ալեքսանդր Յարութիւն-
եանէ: Մենեբրի բաժինները կատարեցին Տիար
Կարո Հեփմեան եւ Տիկին Շաֆե Գալայն-
եան: Ասոնց յաջորդեց Արամ Խաչատու-
րեանի «Օրոր»-ը, դաւեմակի վրայ նախադրե-
նուադուած Տֆր. Պերն Յակոբեանէ, ջու-
րակի ընկերակցութեամբ Տիկին Մարի Պալ-

եանի, որուն աւարտին յայտագրի վարիչ
Տիար Լիպարիս Պետրոսեան բեմ հրաւիրեց
Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ընելու փակման
խօսքը: Ն. Ամենապատուութիւնը հանդէսը
կազմակերպողներուն եւ յայտագրի մէջ մաս
առնողներուն իր գնահատանքը յայտնեց ետք
մաղբեց որ չուշանայ օրը ուր իրականանայ
երազր մեր նահատակներուն՝ ազատագրու-
մովը մեր արգար ու դարաւոր ֆրսիներովն
ու արիւնովը սրբացած պապենական մեր
հողերուն:

Օրուան անցուդարձերը անցեմար շան-
ցան տեղացի ժողովուրդէն: Իսրայէլեան հե-
ռասեսիլը, "Jerusalem Post"-ը եւ եբրայաառ-
բերքերը տեղադարձան մեր դարու առա-
ջին ցեղասպանութեան:

Յաջորդ առաւօտ, Սրբազան Պատրիարքը
հետեւեալ ցաւակցական հեռագիրը ստացաւ.
Եկեղեցիներու Համաշխարհային Հորհուրդի
Քարտուղար Տիար Ֆիլիփ Փօքրեքն. —

Ժընև, 24 Ապրիլ 1980

Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրաէրեան
Պատրիարք Հայոց
Հին Քաղաք, Երուսաղէմ

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը իր աղօթքները կը միացնէ Հայ
Եկեղեցւոյ աղօթքներուն, 24 Ապրիլ 1915ի Եղեռնի յիշատակի օրուան առթիւ:

Յիլիփ Փօթլը
Ընդհ. Քարտուղար

Իսկ Երուսաղէմի Քաղաքապետ Վսեմ. Թէսի Քոլլէք Նոյն առիթով
հետեւեալ հեռագիրը յղեց Նորին Ամենապատուութեան.

Ն. Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Բ.

Հայ Ուղղափառ Պատրիարք

Հին Քաղաք, Երուսաղէմ

Զեղի հետ ենք Ձեր ժողովուրդի Մեծ Եղեռնի յիշատակի օրուան առթիւ:

Յարգանք

ԹէՏի ՔՕԼԼէԲ

Քաղաքապետ Երուսաղէմի

Ապրիլ 24ի երեկոյեան ժամերգութեան ներկայ գտնուեցան ստուար խումբ մը
օտար եկեղեցականներու, համալսարանի դասախօսներու եւ մտաւորականներու, որոնք
եկած էին յարգելու հայ նահատակներու յիշատակը: Ժամերգութենէն ետք, օտար այ-
ցելուներու խումբը ուղղուեցաւ Կիւլպէնկեան Մատենադարան, մասնակցելու համար
յատկապէս կազմակերպուած "symposium"-ի մը, "Genocide and Collective Responsi-
bility" նրթին շուրջ: Գիտական հաւաքոյթը կազմակերպուած էր Իսրայէլի Միջ-Կրօնա-
կան Յանձնախումբի նախաձեռնութեամբ: Իր բացառիկ կարեւորութեան համար, Սիոն
յատուկ յաւելուածով մը կը հրատարակէ երկու նիստերու ընթացքին եղած ներկայա-
ցումները եւ խօսքերը:

Ս. ՅԱՎՈՒԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Զատիկի հրաշափառ տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ եկեղեցւոյ Սրբազան Պետերոսն յղուած են հետեւեալ շնորհաւորական հռազդիրները. —

Երուսաղէմ, 2 Ապրիլ 1980

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.
կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին

Մեր Տիրոջ Յարութեան տօնի ուրախ առիթով, կը ներկայացնենք Ձերդ Սուրբ Օծութեան մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան և Սաղիմայոյ համայնքին տմենասրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ շարունակական առողջութիւն և երջանկութիւն, իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ բարգաւաճում:

Եղիշէ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 2 Ապրիլ 1980

Նորին Սրբութիւն
Յովնանէս-Պողոս Բ. Պապ
Վատիկան

Մեր Տիրոջ Յարութեան տօնի ուրախ առիթով, կը ներկայացնենք Ձերդ Սրբութեան մեր յարգալից շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ առողջութիւն և երկար տարիներ, և կատարեալ յաջողութիւն՝ Ձեր մեծ իտէալներուն:

Եղիշէ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 2 Ապրիլ 1980

Ն. Ամենապատուութիւն Պիմէն
Պատրիարք Համայն Ռուսիոյ
Մոսկուա

Մեր Տիրոջ Յարութեան տօնի ուրախ առիթով, կը ներկայացնենք Ձերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ առեւտրական առողջութիւն, սուրախ օրեր և արեւաշատութիւն:

Եղիշէ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

«Սիոն»ի առաջին պրակները տպուած էին արդէն երբ, 22 Ապրիլին, Վատիկանէն մեր ձեռքը հասաւ հետեւեալ հռազդիրը, ի պատասխան Նորին Ամենապատուութեան Սրբազան Քահանայապետին Ս. Զատիկի առթիւ յղած շնորհաւորական հռազդրին. —

Նորին Ամենապատուութիւն եղիշէ Տէրտէրեան
Հայ Օրթոտոքս Պատրիարքարան
Երուսաղէմ, Իսրայէլ

Մեծապէս շնորհակալ Ձեր Ձատկական շնորհաւորութիւններէն՝ Նորին Սրբութիւն Յովնանէս - Պօղոս Բ. Պապը խնդրած է մեզմէ վստահեցնել Ձերդ Ամենապատուութիւնը իր աղօթքներուն համար: Ձերմ շնորհաւորութիւններով և սրտագին բարեմաղթութիւններով՝

ԿԱՐՏԻՆԱԼ ՔԱՅԱՐՈՂԻ
Քարտուղար Վատիկանի

Հրէից Պատեքի (Բաղարջակերաց) տօնին առիթով, Մարտի 27ին, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր մը յղած էր Իսրայէլի Նախագահին, որմէ ստացուած է հետեւեալ պատասխանը, ստորագրութեամբը իր քարտուղարին. —

Երուսաղէմ, 28 Մարտ 1980

Նախագահ Նաւօնը իր ջերմ շնորհակալութիւնը կը յայտնէ Ձերդ Ամենապատուութեան, Պատեքի տօնին առթիւ Ձեր ըրած բարեմաղթութիւններուն համար, և կը յղէ իր սրտագին շնորհաւորութիւնները Հայ համայնքին, մօտալուտ Ձեր մեծ տօնին առիթով:

Ե Կ Ե Ղ Ե Տ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Եր. 1 Մարտ. — Ս. Կիւրդի երուսաղիմայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Կիւրդի օեղանին վրայ, Մայր Տաճարի աւանդատան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան:

● Կիր. 2 Մարտ. — Անառակին: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Վանուց Տե. սուշը՝ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Դարիպեան: Տե. ղապոզ ձիւնի պատճառաւ քարոզ չխօսուեցաւ:

● Գշ. 4 Մարտ. — Մեծ Պահոց առաջին Հրակումը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, ուր քարոզեց Հոգշ. Տ. Մեսրոպ Արդ. Մուխաֆեան, նիւթ ունենալով Պրոպատիկէի աւազանին մօտ պահուող անդամաւոր իր Բուժման հրաշքը:

● Եշ. 6 Մարտ. — Մայր Տաճարին մէջ կատարուած Մեծ Պահոց առաջին Հսկումին քարոզեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջղջանեան, մեկնաբանելով Անպտուղ Թղենիի աւետարանական առակը:

● Եր. 8 Մարտ. — Ս. Յովհաննէս երուսաղիմայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան:

● Կիր. 9 Մարտ. — Տնեսիին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արդ. Մանկասարեան:

● Գշ. 11 Մարտ. — Հսկումին ի Ս. Հրեշտա-

կապետ քարոզեց Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան, խօսելով զՂջումի ու ապաշխարութեան կարի որութեան մասին:

● Եշ. 13 Մարտ. — Հսկումին ի Ս. Յակոբ քարոզեց Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան, բնարան ունենալով Վերագալիի աղօթքներէն Վիտտովդ քո, Քրիստոս, ամենեքեան լուսաւորեցաւ: Յայտնեց թէ լուսարար ձմեռ ժողովուրդը միշտ երգած է փառքը լոյսին:

● Ուր. 14 Մարտ. — Վաղուան Քառասուն Մանկանց տօնին առթիւ կէսօրէ ետք Իսրայէլական ժամերգութիւն կատարուեցաւ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ, իսկ երեկոյեան՝ Եկեղեցէի (Հսկման) արարողութիւն, որու ընթացքին վարդապետական իր առաջին քարոզը խօսեցաւ Հոգշ. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան, ընելով պատմական Սերաստիոյ լիճը նետուած քառասունին ժողովուրդը իր բարեպաշտական զգացումները արտայայտած էր մոմավառութեամբ և ձէթի նուիրումով:

● Եր. 15 Մարտ. — Ս. Քառասուն մանկանց Սերաստիոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջղջանեան: Վերաբերումը կատարուեցաւ 40 մանկանց նկարին առջև շինուած շարժական սեղանին վրայէն, որուն դիմաց կաթնայի մը մէջ կը պլպլային 40 գունաւոր կանթեղներ՝ աւանդական սացացապատ լիճը խորհրդանշող:

— Կէսօրէ ետք, վաղուան Դատաւորի Կիւրակիի առթիւ, Լուսաւորապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարունակեց իր հանդիսութեամբ մուտք գործեց Ս. Գարուսեան Տաճար: Ս. Գերեղմանին և Գիւտ Խաչի աշրի ուխտերէն ետք, վերջնայ կից՝ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ պաշտօնեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղիներու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արղ. Գալաճեան:

● Կիր. 16 Մարտ. — Գաւառից: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեցան Ս. Գարուսեան, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ապա Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անէմեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Գրիստոսի Ս. Գերեղմանին յորայ և նախագահեց նոյնին և Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռագործ մեծահանգէս թափօրին:

● Գշ. 18 Մարտ. — Հսկումին Ս. Զրեշտակապետ քարոզեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղանեան, մեկնարանելով Սերմիացանի աւետարանական առակը:

● Եշ. 20 Մարտ. — Հսկումին Ս. Գալոթի րանդրանիկ քարոզը խօսեցաւ Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան, բնաբան ունենալով «Տէր, ուսո՛ւ մեզ կալ յաղօթս», Փարիսեցիի և Մաքսաւորի առակին միջոցաւ յայտնելով թէ երբ է որ մեր աղօթքները կը դառնան բնդունելի:

● Ուր. 21 Մարտ. — Նախատօնակին Ս. Գալոթի նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս.:

● Շր. 22 Մարտ. — Ս. Գրիգորի Լուսաւորչից մեռոյ (Մուսնի ի վիճալ): Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Ս. Լուսաւորչի մասունքը իր հանգստարանէն թափօրով փոխադրուեցաւ Աւագ Խորան, ձեռամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի: Ս. Պատարագը մատուցուեցաւ աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին յորայ: Ժամարան էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժեով բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրին յորայ կառուցուած մեր յրանին տակ պաշտօնեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ:

— Գիշերասկզբին, Հոգշ. Տ. Սիւան Վրդ. գլխաւորութեամբ, նոյն վայրին մէջ պաշտօնեցան «Եկեցե՛ն և Հսկման կարգեր, և յետո՛յ՝ գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ, որոնց աւարտին, ըստ սովորութեան, Սրբավայրին Տեսուչը (Հոգշ. Տ. Հայրիկ Արղ. Գալաճեան) Ս. Պատարագ մատոյց Համարձման մատրան մէջ: Արարողութիւնները Կեցին մինչև ուշ գիշեր:

● Կիր. 23 Մարտ. — Գալսեան: Առաւօտեան ժամը 8ին, դարձեալ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժեով բարձրացան Զիթենեաց լեռ ու շարունակեցին մուտք գործեցին Համբարձման Սրբատեղին, ուր կառուցուած մեր յրանին տակ եպիսկոպոսակար խոյր ի գլուխ պատարագեց Հոգշ. Տ. Սիւան Վրդ. Դարիպեան:

● Գշ. 25 Մարտ. — Վերջին Հսկումին Ս. Զրեշտակապետ նախագահեց և քարոզեց նոյն վանքի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սիւան Վրդ. Դարիպեան, խօսելով Ղուկասու Աւետարանին մէջ յիշուած 10 բորոտներու բժշկութեան մասին:

● Եշ. 27 Մարտ. — Մեծ Պահոց վերջին Հսկումին Ս. Գալոթի նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

● Ուր. 28 Մարտ. — Խ. օր մեծ պահոց: Առաւօտուն Մայր Տաճարին մէջ պաշտօնեցաւ Արեւադաշի վերջին ժամերգութիւնը, իսկ երեկոյեան՝ վերջին յապաղականի ժամերգութիւնը:

● Շր. 29 Մարտ. — Յիւսակ յարութեան Ղազար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գիւտգրին: Ժամարան էր Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

— Վաղուան Եպիսկոպոսի տօնին առթիւ, Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Զօր Գրիսաւորութեամբ, Միաբանութիւնը շարունակեց իր հանդիսութեամբ մուտք գործեց Ս. Գարուսեան Տաճար, բանալով շարքը Աւագ Եօթնեակի հանդիսութեանց: Ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտօնեցան մեր վերնատան մատրան մէջ, նախագահութեամբ Լուսաւորապետ Գերաշնորհ Տ. Հայրիկ Արքեպս. Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղիներու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Վանիկ Արեղայ:

● Կիր. 30 Մարտ. — Խաղկապար: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գարուսեան, մեր վերնամատրան մէջ: Ժամարան էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղանեան: Ապա, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. գլխաւորութեամբ, կատարուեցաւ մեծահանգէս թափօր Գրիստոսի Ս. Գերեղմանին և Պատանատեղւոյն շուրջ և Անդաստան: Թափօրակաք ի ձեռնին ունէին արմաւենեաց և Զիթենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպոտց և Ասորոց թափօրները: Կէսօրը անցած էր երրարարողութիւնները աւարտեցան, որմէ ետք Միաբանութիւնը, առաջնորդութեամբ Հայ Երկու Միութեան արիւնքուն, վերադարձաւ Մայրավանք և Հայոց Թաղի մատրան: Ուր գիտհուրդ քո գալստեան շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան:

— Կէսօրէ ետք, շքեղօրէն զարգարուած

Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդա-տան», ապա տօնին յատուկ արտագրաւ մեղե-դիներով ընդմիջուած երեկոյեան ժամերգու-թիւն և «Գոնրացէք» արարողութիւն, բոլորն ալ նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս-փարիկեանի: Հոգշ. Տ. Սեան Վրդ. կարգաց-անաւանցանկը վարագոյր բացող հաւատաց-եալներուն և կոչ ըրաւ ներկաներուն, որ ի-րենց լուծանքներով նպաստեն Աղունիէի Ազգ-իւն ժառանգին: Այդ նպատակաւ, եկեղեցւոյ զոյգ մուտքերուն զետեղուած էին պնակներ:

● Գշ. 1 Ապրիլ. — Աւագ Երեմեայի (Յիւսէփ Եսայի կուսանաց): Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի դաւթին արեւելակողմը գտնուող Ս. Յովնանէս Աւետարանչի հայա-պատկան մատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Ս. Թարգման-չաց Վարժարանի աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն: Ապա կատարուեցաւ տոխ-տաւորաց բացառիկ թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զրէանեան:

● Եշ. 3 Ապրիլ. — Աւագ Հիմեայի (Յիւսէփ Ընթեաց): Առաւօտեան ժամերգութեան աւար-տին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կա-տարուեցաւ «Կարգ Ապաշխարողաց»:

— Կարճ դադարէ մը ետք, Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատա-րագ: Պատարագիչն էր Միացեալ Նահանգնե-րէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Գերշ. Տ. Հմայեակ Եպս. Ինդոյեան, որ կատարեց նաև ընթերցումը Ս. Բարսեղ Հայրապետի Հաղոր-դութեան ծառին: Բաւական թիւով փողովորդ ստացաւ Ս. Հաղորդութիւն:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, Մայր Տաճարին մէջ կա-տարուեցաւ «Ոտնալուսչի» հոգեգրաւ արարու-ղութիւնը: Եկեղեցւոյ զոյգ դասերը լեցու-ն էին օտար հիւրերով, որոնց շարքին՝ երու-սաղէմի Քաղաքապետ Ն. Վսեմ. Թէօփ Քու-լէք, Նահանգային Կառավարիչ Տիար Ռաֆա-յէլ Լէվի, Կրօնից Նախարարութեան ներկա-յացուցիչ Տիար Իսրայէլ Լիփիէլ և Անկլիքան Արքեպս. Գերշ. Տ. Ֆայէք Հատատ, որ, ըստ սովորութեան, զգեստաւորուելով Անգլերէն լեզուով Ս. Աւետարանի ընթերցում կատարեց Աւագ Սեղանի բնէն:

— Ժամը 4.30ին, փոքր թափօր մը, գլխա-ւորութեամբ Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զրէ-անեանի, մեկնեցաւ Ս. Հրեշտակապետաց ե-կեղեցին: Չարչարանաց խորանին առջև կա-տարուած Ս. Աւետարանի ընթերցումէ ետք, թիթիւրէն մաղուող անձրևի տակ, թափօրը յառաջացաւ դէպի եկեղեցւոյ դաւթին մէջ գտնուող Ս. Զիթնիի ծառը, որուն զիմաց կատարուած կարճատև արարողութենէն ետք Հոգեշնորհ Հայրը խօսք առնելով՝ պարզեց

հանգամանքները մեր Տիրոջ դատաւարու-թեան, տալով նաև պատմականը նոյն վան-քին: Հոգշ. Հայրը խօսեցաւ նաև Ս. Փրկչի վանուց դաւթին մէջ, ուր մեկնեցան թափօ-րականք ապա, շարականներու երգեցողու-թեամբ: Ըրաւ նաև հակիրճ պատմականը հա-յապատկան և քրիստոնէական տեսակէտէ մեծ կարեւորութիւն ունեցող այս Սրբավայրին:

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Կարգ Խաւարման», տխրադե-ցիկ խորհրդաւորութեամբ: Յուզիչ էր պահը երբ համատարած մութին մէջ խօսք առաւ Գերշ. Տ. Հմայեակ Եպիսկոպոս, որ ելլ Յուդա արտաքս, և էր գիշերը բնաբանով կուռ քա-րողով մը վեր հանեց զլացի գիշերուան բա-րեբար ու փրկարար նշանակութիւնը:

● Ուր. 4 Ապրիլ. — Աւագ Ուրբաթ (Յիւսէփ Խաչելութեան): Կէսօրը քիչ անց, Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատրան մէջ կա-տարուեցաւ «Կարգ Խաչելութեան»: Հանդիսա-պետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

— Ժամը 4ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճա-րին մէջ կատարուեցաւ մեծահանդէս «Կարգ Թաղման Քրիստոսի», նախագահութեամբ Ամե-նապատիւ Ս. Պատրիարք Հօր:

● Եր. 5 Ապրիլ. — Աւագ Շաբաթ (Ճաղալոյց Ս. Զաւկի): Առաւօտեան ժամը 9.30ին(*), Սուրբ Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնուելով Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպիտ Վրդ. Պալեանի ձեռքէն:

— Ժամ մը ետք, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի գլխաւորութեամբ, Միաբանու-թիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանին շուրջ մէկ անգամ դառնալէ ետք թափօրը ուղղուեցաւ Տաճարի մեր Տեսչարա-նը: Արեւելեան եկեղեցիներու հմայքներէն և Կիպրոսէն ու Յունաստանէն ժամանած Յոյն ուխտաւորներու բազմութեամբ լեցուած էին Տաճարին գերթէ բոլոր մասերը: Ժամը 11ին կատարուեցաւ կնքումը Ս. Գերեզմանի գրան, ի ներկայութեան պետական ղեմքերու: Կէսօ-րին՝ Յունաց Միաբանութիւնը մուտք գործեց Տաճար, ու կէս ժամ շանցած իրենց մեծա-հանդէս թափօրը սկսաւ, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Ճէրմաստու Արքեպս. ին, որ եռագրած թափօրի աւարտին, մեր Լուսահանին՝ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեանի հետ մտաւ Ս. Գե-րեզման, ուրկէ երեք վայրկեան ետք դուրս պիտի գար նուիրական լոյսը, կարելի փութով փոխանցուելով Ս. Գերեզմանի շրջափակին:

(*) Աւագ Ուրբաթ օրը Յունաց՝ իսկ Աւագ Շաբաթ օրը Հայոց իրաւունքն է բացումը կա-տարել Ս. Յարութեան Տաճարի դրան: Զատիկը միասին տօնուած տարիներուն, Տաճարին դուռը կը բացուի ժամ մը ուշ, Լատինաց «Լու-սաւորեայի» արարողութենէն ետք:

վրայ հայող մեր վերնամասերան պատշգամբին մէջ իր տեղը զբաւած Գերշ. Տ. Շահէ Սրբազանին, որ անով կ'օրհնէ վարը խառնած ծովածաւալ բազմութիւնը: Անմիջապէս ընթացք կ'առնէ մեր թափօրը, որ Տաճարին հայկական և յունական բաւոր զանգերուն և կոշնակներուն զուարթ զօղանջներուն ընդմէջէն երիցս շրջանը կ'ընէ Ս. Գերեզմանին, երգելով Յարութեան շարականներ: Թափօրը կը գլխաւորէր, ըստ սովորութեան, Լուսահան Նայրսուրը, եպիսկոպոսական խոյր ի գլուխ, իսկ Ղպտիններ և Ասորիներ թափօր կազմած կը հետևէին մեր թափօրին: Ժամը 2-30ին, Միաբանութիւնը ճամբայ ելաւ դէպի Մայրավանք: Ճամբա կէտին, Դաթի բերդին դիմաց, Հանգստակետ Սրբազանին ու Լուսահանը զգեստաւորուեցան և առաջնորդութեամբ Հ. Մ. Բ. Մ. Ի. Հ. Ե. Մ. Ի. և Աբաքաթի արիններուն և արենոյշներուն, թափօրը շարժեցաւ: Վերստոս Յարեաւ շարականի երգեցողութեամբ: Հանգստակետ Սրբազանին Մայր Տաճարին մէջ կատարած Ս. Աւետարանի ընթերցումը ժամուան մը դադար բերաւ հանգիստութիւններուն:

— Ժամը 4ին, Մայր Տաճարին մէջ սկսաւ ծրագրաւորյի արարողութիւնը, որուն աւարտին, Քրիստոսի Յարութեան աւետիսով բացուեցաւ վարագոյրը Աւագ Սեղանին և սկսաւ իրիկնադէմի խորհրդաւոր Ս. Պատարագը՝ զոր մատոյց Հոգը. Տ. Ասպետ Վրդ. Պալեան: Ապա կատարուեցաւ Ս. Զատիկի նախատօնակ՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Նպիսկոպոսի: Արարողութեան աւարտին, Այսօր յարեաւ շարականի երգեցողութեամբ Միաբան Նայրեր և զպլիններ զգեստաւորեալ բարձրացան Սեղանատուն՝ ընթերքի:

● Կիր. 6 Ապրիլ. — ԶԱՏԻԿ ԹԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌԻ ՄԵՐՈՅ: Կէս գիշերէն ետք ժամը 1-30ին, Մայրավանքի մեծ զանգը տալի է հանած արդէն Միաբանութիւն և ժողովուրդ: Կէս ժամ ետք, Գերշ. Տ. Կիրեղ Նպ. Դարիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Նայրեր կը մեկնին Ս. Յարութեան Տաճար: Ս. Գողգոթայի վրայ կատարուած ուխտէն ետք, Տաճարի վերնատան մեր մատրան մէջ պաշտուեցաւ գիշերային ժամերգութիւնը և մաս մը առաւօտեան ժամերգութեանէն մինչև շաբաթ, երբ Միաբանութիւնը իջաւ շրջափակը Ս. Գերեզմանին, շարունակելու համար ժամերգութիւնը, երիցս դարձմամբ Սրբավայրին շուրջ: Ս. Գերեզմանի զրան իւղարբերից Աւետարանի ընթերցման աւարտին կատարուեցաւ Անդատան: ու երգուեցաւ Թալի քո Քրիստոս: Մեր թափօրին կը հետևէին Ղպտոյ և Ասորաց թափօրները: Մէկ ժամուան դադարէ ետք, Գերշ. Հանգստակետ Սրբազանը մատոյց օրուան հանգիստաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Կենսատու Գերեզմանին վրայ և քարոզեց օրուան մեծ տօնին

շուրջ, քնարան ունենալով շէտտ, քանդի յարեաւ: Ս. Պատարագը ձայնափռուեցաւ իրարայլեան ռատիօկայանէն: Վանք դարձին՝ Հայոց Թաղի մուտքէն, Վերստոս յարեաւ շարականը երգելով Միաբանութիւնը յառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Նայրը Յարութեան աւետիսը տալի ետք օրհնեց ու արձակեց ամէնքը: — Կէսօրէ ետք, Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Զատիկեան մեծ Անդատանը՝ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Նայր:

● Բշ. 7 Ապրիլ. — Բ. օր Ս. Զատիկի (Յիւսակ մեռելոց): Ամեն. Ս. Պատրիարք Նայրը մատոյց օրուան հանգիստաւոր Ս. Պատարագը՝ Ս. Յանգիստեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, քարոզեց Յարութեան մեծ խորհուրդին շուրջ և ապա, Կենաց Փայտի մասունքն ի ձեռն և ամպնովանի ի ներքև, նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած երգարձ մեծահանդէս թափօրին, որուն ընթացքին վարդապետներ ի ձեռն ունէին սրբոյ մասունքներ: Յետոյ երգուեցաւ Արեադալի ճանապարհ շարականը, որմէ ետք, Այսօր յարեաւ ի երգեցողութեամբ, ամէնքը բարձրացան Պատրիարքարան, ուր Նորին Ամենապատուութիւնը Ս. Պատարագի նշխար բաժնեց բոլորին:

● Գշ. 8 Ապրիլ. — Գ. օր Ս. Զատիկի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Դիւթաղի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգը. Տ. Համբարձում Արդ. Քէշիշեան: Յետոյ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ խնդրամատոյց ուխտաւորաց ննջեցեալներու հոգիներուն համար:

● Եր. 12 Ապրիլ. — Դիւթաղի Ծովնաճուղի Կաթալեթին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիւթաղի: Ժամարարն էր Հոգը. Տ. Նայրիկ Արդ. Դաւայեան:

● Կիր. 13 Ապրիլ. — Նոր Կիրակի (Կրկնագահիկ): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Լուսահանը՝ Հոգը. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

● Եր. 19 Ապրիլ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիւթաղի: Ժամարարն էր Հոգը. Տ. Բարսեղ Արդ. Դաւեմտէրեան:

— Կէսօրէ ետք, վարդապետ Անիսարհամատրան Կիրակիի առթիւ, Գերշ. Տ. Կիրեղ Նպ. Դարիկեանի զխառնութեամբ, Միաբան Նայրեր շարաւափառով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ վերնատան մեր մատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանգիստաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Նոյը. Տ. Բարսեղ Արեկայ:

● Կիր. 20 Ապրիլ. — Աւիսահամաճուղի (Կաթալեթի Կիրակի) և Աւիսովն Ս. Աստուածածին: Գերշ.

բային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Գարուսիւն, լիւրնատան մեր մատրան մէջ: Ապա, Գերշ. Տ. Կիրեղ Եւպիմուս մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեղմանին լրայ և նախագահեց Վնդատանին:

● Բշ. 21 Ապրիլ. — Ս. Կոյսի Աւետման տօնը այս տարի զուգարդիպած ըլլալով Աշխարհամատրան Կիրակիին, յետաձգուեցաւ վաղուան: Առայդ, երեկոյեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր նախատօնակ՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անէմեանի:

● Գշ. 22 Ապրիլ. — Առաւօտուն, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժեքով իջան Գեթեմանի ձորը ու Հրաշափառով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեղմանին լրայ հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց և քարոզեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը, բնարան ունենալով Գարբիէի հրեշտակապետին Աւետման պահուն Տիրամօր ուղղած խօսքերէն «Մի երկնիւր, Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ» (Ղկս., Ա. 30):

● Շբ. 26 Ապրիլ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարան էր Հոգշ. Տ. Ոսկի Աղջ. Որդիքեան:

● Կիր. 27 Ապրիլ. — Կարմիր Կիրակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուսիւն, լիւրնատան մեր մատրան մէջ: Պատարագեց և քարոզեց Հոգշ. Տ. Մեսրոպ Արղ. Դոմաֆեան, բնարան ունենալով Վայց եթէ ինչ ի Քրիստոս նոր արարած իցէ. զի հինն անց, և արդ նոր եղև ամենայն (Բ. Կորնթ., Ե. 17):

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 2 Մարտ. — Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան ներկայ գտնուեցաւ Թումանական Եկեղեցւոյ Պատր. Փոխանորդ Վասիլ Թիրկովիսթէանիւրի մեկնումին և Արշիմանտրիթ Քօրնիլա Վասիլի պաշտօնի ձեռնարկելու առթիւ տրուած ընդունելութեան:

● Բշ. 17 Մարտ. — Բրիտանական Նոր Հիւպատոս Պր. Տօնալտ Համէյ իր առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

● Ուր. 21 Մարտ. — Բենեդիկտեան Ուխտի հիմնադիր Ս. Բենեդիկտոսի տօնին և ծննդեան 1500ամեայ Յօրհեանին առթիւ, Սիոն լեռան Տորմիսոններու եկեղեցւոյ մէջ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին և կատարուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան և Տիար Գեորգ Հինգիւան:

● Գշ. 25 Մարտ. — Յունաստանի անկախութեան տարեգարծի տօնին առթիւ, Հէլէն

Հիւպատոսի կողմէ, Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անէմեան:

● Ուր. 28 Մարտ. — Միացեալ Նահանգներէն Գերշ. Տ. Հմայեակ Եպս. Ինդոյեան հիւրարար ժամանեց Ս. Աթոռ և Զատիկի տօնը մեր մէջ անցընելէ ետք 9 Ապրիլ, Զորեքշարթի օր, լիւրնատան իր պաշտօնավայրը՝ Միամի:

● Եշ. 3 Ապրիլ. — Կէսօրէ ետք ժամը 4ին, Երուսաղէմ ժամանեց Եթովպական Եկեղեցւոյ պետ Ն. Ամեն. Թէքլաւայմանօթ Պատրիարքը: Դիմաւորութիւնը կատարուեցաւ Եաֆայի դրան մօտ, ուրկէ Մեծապատիւ Հիւրը Թափօրով և Հայ Արիներու առաջնորդութեամբ յառաջացաւ մինչև Քրիստոնէից թաղի իրեցեղանքը: Մեր կողմէ զմաւորութեան դացած էին Գերշ. Տ. Շահէ և Գերշ. Տ. Կիրեղ Սրբազաններ: Իսկ Հոգշ. Տ. Տ. Անուշաւան և Նուրհան Վարդապետներ դացած էին Պէն-Կուրեօն օղակայան՝ բարի գալուստ մաղթելու:

● Բշ. 7 Ապրիլ. — Կէսօրէ ետք, Եթովպոյ Պատրիարքը այցելեց Ս. Գարուսիւն Տաճար և զմաւորութեան երեք յարանուանութեանց ներկայացուցիչներու կողմէ: Մեր կողմէ ներկայ էին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Շահէ և Տ. Կիրեղ Սրբազաններ և Հոգշ. Հայրեր: Բարձրապատիւ Հիւրը պատուաւորութեան Տաճարի մեր Տեսչարանին մէջ:

● Գշ. 8 Ապրիլ. — Կէսօրէ առաջ, Սուրբ Զատիկի տօնին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, շնորհաւորական այցելութիւն տուաւ Լատինաց Պատրիարքին, որ ժամ մը առաջ նոյն առթիւ իր հետևորդներով այցելութեան եկած էր մեր Պատրիարքարան:

— Նոյն առթիւ, Պատրիարքարան շնորհաւորութեան եկան Երուսաղէմի Վեմաշուք Բաղաբապետը, Նահանգային Կառավարիչը, Ընդհ. Ապահովութեան Պետը և Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչը:

— Միացեալ Նահանգներու զանազան շրջաններէն 15 քաղաքապետներ այցելեցին Ամեն. Ս. Պատրիարք Հօր և շրջեցան Վանուցայազան բաժինները:

● Գշ. 9 Ապրիլ. — Նոյն առթիւ, Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, շնորհաւորական այցելութեան գնաց Յունաց Պատրիարքին և Ֆրանչիսկեաններու Կիւսթոսին: Ապա, հետո ունենալով Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Սրբազանը, այցելեց Պապական Նուիրակին և Անկիթքան Արքեպս. ին — Փոխադարձարար Պատրիարքարան շնորհաւորութեան եկան Յունաց Պատր. Փոխանորդը և Ֆրանչիսկեանց Կիւսթոսը, հանդերձ Միաբանութեամբ, Հապէլաց օրերս Ս. Երկիր այցելող Պատրիարքն

«ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԸ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵԻԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայկական Սովետական Հանրապետության — Հատար 2, Արգիշտի - Գեղերվան: Գլխավոր Իւմ. Բաղդիս: Վ. Հ. Համարաձուլման: Երևան, 1976, էջ 719:

Անյաղը Ակուր — Յովհաննէս Թումանյան: Երևան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1976:

Նաղաշը եւ Լավաշը — Աշոտ Սահրատեան: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1976:

Լուսաւոր Համբաներ — Արտակ Արքեպոս. Մանուկեան: Թեհրան, Տպ. «Նայիրի», 1976, էջ 258:

Արապկազ Եանձնադրութիւն — Բորիս Վինոկուր: Թարգմանեցին՝ Ռ. Այվազեան եւ Մ. Մանուկեան: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 243:

Բնութեան Բողոքի Գիրքը — Բելլա Գիթա: Թարգմանեց՝ Կ. Լ. Սարգսեան: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 270:

Մովսէս - Թմրուկ — Յակոբ Պարոնեան: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 86:

Աշխարհագրական Հանելուկներ - Խաղեր — Յովհաննէս Չիլեան: Երևան, «Լոյս» Հրատարակչութիւն, 1977, էջ 129:

Գ. Գեղարեանի «Վարդանանք» (Պարբերական եւ Պատկերական) — Վահագն Մկրտչեան: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 141:

Նոր-Ջուղայի Ազգ. Թատրոնը (1888-1913) (25ամեայ Յարելեանի առթիւ) — Տիգրան Թ. Անդարեանց (Խմբագրող): Նոր-Ջուղա, Տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց, 1913, էջ 27:

Կոնցերտ Ջութիկի եւ Նուագախմբի համար, Կլավիր — Առոտ Բարաշանեան: Երևան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1973, էջ 82 եւ 23:

Բոլորից Ծառ Ժողովին եւ Սիրում — Մարո Արահանեան-Թաթրեան: Նկարիչ՝ Գ. Աղասեան: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 31:

Ա. Ս. Պաշկին — Ա. Ս. Աղայեան (Թարգմանիչ): Նկարիչ՝ Անատոլի Գրիգորեան: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977:

Գրական Մշակներ — Կարէն Դանիէլեան: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 387:

Աստուածաշունչ Մանանի Հայկական Կնապիւր (Մատենագիտութիւն) — Յ. Ս. Անասեան: Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 310-667:

Ճանուր — Վոլֆկանկ Կէօթէ: Գերմաներէն ընթերցելի թարգմանեց՝ Կարապետ Գ. Իւլիսկեան: Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970, էջ 157:

Հայ Գրողներ — Արամ - 36 գրողներու նկարները: Երևան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1976:

Բաւրի Աղուէք — Հանրի Զարեան: Նկարիչ՝ Անատոլի Գրիգորեան: Երևան, Հրատարակչութիւն, 1976:

Յիշատակարան Երևան - Կղզիական Սանուց Միութեան — Հաւաքեց եւ դասաւորեց՝ Յարութիւն Յովհաննեան: Նիւ ձըքսի Նիւ Եօքս, Տպ. Արմինիւն Բրորթըրի, 1977, էջ 75:

ու տեղւոյս նպակոյտը եւ Ասորոց նպակոյտը, բոլորն ալ իրենց Միաբանութեան անդամներով, Պապական Նուիրակը, Անկլիքան Արքեպոս.ը, Յոյն-Կաթողիկոսներու, Ասորի-Կաթողիկոսներու եւ Մարոնիթ համայնքի Մեծաւորները, Տորմիսիոններու վանքի Մեծաւորը, Լուսեռականներու նպակոյտը եւ Փրօփսթը, ինչպէս նաեւ Հայ-Կաթողիկէ հասարակութեան առաջնորդը եւ Ս. Գաղաքիս Հիւպատոսական անձնակազմը:

— Իսկ Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս. Վարդապետ Հայրերու ընկերակցութեամբ, փոխադարձ այցելութեան գնաց փոքր յարանուանութեանց հոգեւոր պետերուն:

● Բշ. 14 Ապրիլ. — Երեկոյեան ժամը 6ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Պատրիարքարանի դահլիճին մէջ փառայեց ընդունելութեամբ մը պատուեց Եթովպիոյ Ամեն. Պատրիարքը:

● Գշ. 15 Ապրիլ. — Կէսօրէ ետք, ձերմակ Թուս Եկեղեցւոյ հովիւ Հայր Անթոնի Կրապ-

պէի կողմէ, Զատիկական տօներու առթիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան եւ Հոգշ. Տ. Ոսկի Արք. Որդիքեան:

● Բշ. 21 Ապրիլ. — Իսրայէլի Անկախութեան 32րդ տարեդարձի առթիւ, Կէսօրին, Երուսաղէմի Քաղաքապետ Վսեմ. Թէտի Բօլէքի կողմէ, Դաւթի Բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Շահէ Արքեպոս. եւ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

● Գշ. 30 Ապրիլ. — Երեկոյեան, Հոլանտական Հիւպատոսարանի մէջ, ճուլիանա հրաժարեալ Թագուհւոյ ծննդեան տարեդարձի եւ Պէթրի Թագուհւոյ զահակալութեան առթիւ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս. Գարիկեան, Հոգշ. Տ. Մեսրոպ Արքեպոս. եւ Տիար Գ. Հինդիեան:

- Հայտնի են Իր Ցարագները:** Թեհրան, «Հայ Կին» Միութեան Հրատ., 1976: Պատկերազարդ:
Արու - Հասանի Մաշիկներ — Ստ. Լիսիցեան: Նկարիչ՝ Ֆ. Ա. Գիւլանեան: Երևան, 1977:
Կանաչ Գլխակով Օրհորդներ (Կատակերգություններ 4 Արարուած): Բաղմագրուած Տիթրոյթի
ձեռք, 1967, էջ 46:
- Ֆիզիկական Աշխարհագրութեան Տեղեկատու - Համառոտ Բառարան** — Կարօ Հ. Չէրքէզեան:
Երևան, «Լոյս» Հրատարակչութիւն, 1976, էջ 167:
- Գիտօրի Մագը** (Փոխադրութիւնը եղիշէ Զարենցի, ըստ Ս. Մարչակի «Գրքայի Գրքայիների
Մասին» պոէմի) — Ս. Մարչակ: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1976:
Երկիր Նայիրի — եղիշէ Զարենց: Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 173:
Վարդապետներ — Ա. Ա. Պէլլի: Բաղմագրուած:
Մեծ Գիւն Դաշնամուրի համար — Տիգրան Մանսուրեան: Երևան, «Սովետական Գրող» Հրա-
տարակչութիւն, 1976, էջ 15:
- Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետի Ինքնորոգ Ուղեւորութիւնը** — Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետ
Պաշտօն: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1971, էջ 297:
- Մուսաղէմի Հայոց Ամենապատիւ Տ. Սիլիշէ Մրցադան Պատրիարք Մայր Աթոռում** — Ար-
թուր Հատիտեան: Առանձնատիպ էլէմիածին: Ամսագրի 1976 թ. Գ. համարից: Մայր Աթոռ
Ս. Էջմիածին, 1976, էջ 3-32:
- Սիլիշէ (եղիշէ Պատրիարք Տէրութեան)** — Արթուր Հատիտեան: «Հեթանոսաց Առաքեալը»,
երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1975, էջ 122: Առանձնատիպ էլէմիածին: Ամսագրի 1976 թ.
Գ. համարից: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1976, էջ 40-47:
- Օրացոյցներ 1978 տարուայ՝ ա) երուսաղէմի, բ) էլէմիածնի, գ) Պալատի, դ) Նոր Զուղայի, ե) Վե-
նետիկի և զ) Փարիզի (վերջինիս 1976 և 1977 տարիներունը ևս):**
Learning English (Book One) — J. M. Miller. Illustrated by Dorothy Heather. London, Longman Group
Ltd., 1973, pp. 79.
The same, Book Two, 1971, pp. 78. Book Three, 1970, pp. 93. Book Four, 1976, pp. 96.
Que Fait Jean? — C. E. Loveman. Modern Method French Reading Scheme. First Year, Book 1. Illus-
trated by John Mackay. London, Thomas Nelson and Sons Ltd., 1973, pp. 32.
Choice Pages in English and American Fiction and Non-Fiction Prose, Up to the XXth Century — Se-
lected and Arranged by the Committee of English Studies, Tel Aviv-Jaffa. Published by the Depart-
ment of Education. Municipality of Tel Aviv-Jaffa, 1952, pp. 346.
New English Course for Jordan (Book One) — By a Committee of Teachers. The Modern Library (Edu-
cational Book Centre). Ramallah, Jordan, Rafidi Printing Press, pp. 41.
The Same, Book Two, pp. 45.
Mon Premier Syllabaire — Premier Livret. Beyrouth, Librairie Moderne Al-Farah, 4è Ed. 1966, pp. 36.
A Dictionary of Roman Coins, Republican and Imperial — Sebb William Stevenson, Roach C. Smith &
Frederic W. Madden. Illustrated by Upwards of Seven Hundred Engravings on Wood, Chiefly Executed
by the late F. W. Fairholt. London, B. A. Seaby Ltd., 1964, pp. 929.
The Timeless Holy Land — Assadour Antreassian. Jerusalem, the St. James Press, 1977, pp. 208.
Calendar of Christmas Religious Ceremonies in Bethlehem — For the Period Dec. 24 - January 19, 1977.
English + Arabic + Hebrew. For Official Use only. Printed in Jerusalem, 1976, pp. 25 + 31 + 24.
General Information and Programs of Study — Editor: Asher Margalioth. Hebrew University of Jerusalem,
Academic Years 1972-1974. Jerusalem, Published by the School for Overseas Students, the Hebrew
University of Jerusalem, October 1972, pp. 488.
Juifs et Arabes — Jean-Pierre Alem. 3000 Ans d'Histoire. Paris, Ed. Bernard Grasset, 1968, pp. 383.
An Introduction to Child Study — Ruth Strang. Revised Edition. New York, Macmillan Co., 1940, pp.
Our Awesome Universe — St. Albans, Ambassador College, 1973, pp. 32. [681].
The Claims of the Church of England — Cyril Garbett (Archbishop of York). London, Hodder & Stoughton
Ltd., 1947, pp. 304.
Lectures to Nurses — Margaret S. Riddell. A Complete Series of Lectures to Probationary nurses in their
first, second and third years of training. Eighth Edition. London, Faber & Faber Ltd., 1942, pp. 618.
Poetry Books — J. Sharbain. A Three-Book Course for Primary Schools in the Arab World. Book Two.
Jerusalem, Al-Ma'arif Press, 1966, pp. 44.
Aids to Theatre Technique — Marjorie Houghton & Margaret Harding. With Foreword by Walpole Lewin.
London, Baillière, Tindall and Cox, 1948 (Reprint), pp. 262.
Midwifery — Christie R. Brown, Barton Gilbert and Richard H. Dobbs. Principles and Practice for Pupil
Midwives, Teacher Midwives and Obstetric Dressers. Second Edition. London, Edward Arnold & Co.,
1948, pp. 831.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պատրիարքական Կոնգրակ՝ Գերե. Տ. Գարեգին Արքեպս. Գազանենեանի ուղղուած	50
Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն	51
Միւռնոցհոգեւորեան հրաւեր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կորովիկոսարանէն	52
Շնորհաւորական գիր՝ Ռուսոց Պիմէն Պատրիարքէն	53
» գիր՝ Տիար Ալեքս Մանուկեանէն	53
Շնորհակալութեան գիր՝ » » »	54
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
— Եղիշէ Պատրիարք Դուրեան	Գ. ձ. 55
ԿՐԾՆԱԿԱՆ	
— Վարդանանք	ԱՂԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԱԼԻՈՋԵԱՆ 59
— Մեծ Շարժումը	ԳԼՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻՋԵԱՆ 61
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	
— Քունը	Գ. ՃԱՐՏԱՐ 63
ԴՐԱԿԱՆ	
— Եղիշէ Դուրեան	ԿԱՐԻԿ ՊԱՍՄԱՃԵԱՆ 64
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Լուսանցագրութիւններ	Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ 67
ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ	
— Հայկական դրամներու նոր հաւտֆանոն քանգարանէն ներս	ԶԱՐԵՀ ՊՏՈՒԿԵԱՆ 71
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ	
— Իլիւրեան Կարովիկոսի հրաժարականը	ՅՈՒՍԻԿ ՎՐԴ. ԶՕՀՐԱՊԵԱՆ 78
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔՆԵՐ	
— Ս. Հեփեսկապէս վանք Սեբասիոյ	Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ 83
ՍՈՒՆ, Ի ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ	
— Իճնէ «Ալիւրիա» բառի բուն իմաստը	84
— Օրբոսոսներու խաչակնքումի ձեւի մասին	84
Նկատողութիւններ	Գ. 84
ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ	
— Դուրեան Յոբելեան	85
— Տօն Ս. Վարդանանց զօրավարաց	85
— Տեառներնդառաջ	85
Վարսունիի զեքրոյ տարեգարծ Ապրիլեան եղեռնի	86
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ	
— Հեռագիրներ	88
— Եկեղեցական - Բեմական	89
— Պատճանակներ	93
Ցանկ՝ Կիւլպէնկեան Մասենադարանի կողմէ ստացուած գրքերու	94

